

891.99

CP-27

QITABЫ VƏKTİNDƏ KAJTARLNIZ
ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

1 NOV 2011

БЕРЕГИТЕ КНИГУ!

она служит не одному, а многим.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

№çé däfə vərilmisdur
Количество предыдущих выдач

208

391-99

U-27

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՈՒԿԻԵՍ



UF-30.1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ

16621

Центральная библиотека им. Ленина
гор. Баку
ИДЕОГРАФИЗАЦИЯ 1936 г.
№

Ելեֆտրատպ. օր. Ն. Աղանեանցի, Պոլից. Դ.
1912

Կ Ա Տ Ա Կ

Արդէն սկսել էր մթնել: Բայց նրանք դեռ
կծկված եկեղեցու պատի տակ՝ սպասում էին,
որ անձրեք բոլորովին դադարի:

Ցնցոտիները հազիւ էին ծածկում նրանց
մերկ մարմինները: Փողոցներում անանցանելի
ցեխ էր: Նրանք կծկվել՝ լուռ էին:

— Զը կտրվեց, — հարցրեց նրանցից մէկը,
ձեռքը պարզելով օդի մէջ:

— Բարակել է, գնանք:

— Հա, գնանք, ես լաւ մրսեցի, — ասաց
կոյր ծերունին լալկան ձայնով:

Միւսը վեր կացաւ, վերցրեց կողքին ըն-
կած պարկը և ցուպը, փեշը տուեց ծերունուն,
որը դողալով կանգնած էր:

Նրանք առաջ շարժվեցին, առանց ուշք դարձ-
նելու որ մինչև սրունքները խրված են ցեխի մէջ:

— Ի՞նչ ցուրտ է, ես լափ սառայ:

— Մի քիչ շուտ-շուտ արի, կը տաքանառ:
Նրանք արագացրին քայլերը: Ծերունին հա-
զիւ էր քարշ տալիս իր ծեր, խոնաւ ոտները և
շարունակ հայի՛ոյում, անիծում էր:



1088
41

—Այ մարդ, էս որտեղ բերիր. ախար կարգին
ճանապարհ չը կար, որ էս ցեխերն ես ընկել:

—Շատ մի խօսայ, լոք տուր:

Առանց երկար սպասելու, նա մի թեթև շար-
ժումով ցատկեց տուուի միւս ափը, քարշ տալով
իր ետևից ծերուկին, որ մի քիչ ուշացաւ, սայ-
թաքվեց և ընկաւ առուի մէջ, որտեղից հոսում
էր կեղտոտ ցեխախառն ջուրը:

—Վայ, —հառաչեց ծերունին, —ձեռքիս փայ-
տը մի կողմ ընկաւ:

—Վա, քո տունը չը քանդվի, խի... խի... խի...

—Այ անիծվես, նզովուես, —տնքալով առուի
միջից կանչում էր կոյրը:

Միւսը լայն բացած բերանով հոհուում էր:

—Ի՞նչ ես հոհուում, բարձրացրու:

—Պահ, քու տունը չը քանդվի, հա, հա,
հա... բաս չասացի առու է, լոք տուր:

—Նզովուած լինես, նզովուած. էս ի՞նչ օյին
ես բերում իմ գլխին, —մըմնջում էր ծերունին՝
կարծես հազիւ պահելով աբցունքները, և աշխա-
տում էր դուրս գալ առուից:

—Լաւ, լաւ, հէրիք հայհոյես, ես ի՞նչ մեղ
ունեմ, —լրջանալով ասաց միւսը, փեշը տալով
նրան:

—Ախար էս օյի՞ն է, որ դու իմ գլխին ես
գալիս, այ նզովից արմատ:

Ոտից գլուխ ցեխուաված՝ նա կանգնած էր.
ցնցոտիների վրայից ջուրը կաթկթում էր: Նա
թեքերով աշխատում էր մաքրել ցեխուած սպի-
տակ միլուքը:

—Տօ, ես ի՞նչ մեղ ունեմ, չասացի՞ լոք
տուր:

—Բա ես կարամ թռչել, որ հայվանի պէս
թռչում ես և ինձ էլ ետևիցդ քարշ տալիս:

—Դէ լաւ է, քօփակ. ի՞նչ եղաւ, մի քիչ
թրջվեցիր. շաքար հօ չե՞ս, որ հալչես: Արկը կը
տայ՝ կը չորացնի:

—Հայ չորանաս ու չօր ցաւի դաս, մուր-
տառ շուն:

—Դէ, դէ, հէրիք է, շատ զահլա մի տանի,
թէ չէ՝ քեզ էլ ու քու... կը թողնեմ ու եալլահ:

—Զառը գնաս ու ջնանդամը:

—Լաւ, տեսնենք ով կը փոշմանի, —ասաց
նա ու արագ շուռ եկաւ ու գնաց: Մի քանի
քայլ հազիւ էր արել՝ երբ կարծես մի բան յի-
շելով քայլերը կամացացըրեց, մի քանի քայլ էլ
արեց ու կանգնեց: Յետ նայեց. ծերունին դո-
ղալով կանգնած էր. նա խղճաց նրան, ուզեց
յետ դառնալ, բայց մնաց տեղումը և շարունա-
կեց կանգնած տեղը գաւազանով թակել գետինը
և ցոյց տալ՝ իբր թէ հեռանում է:

—Ագա ուր ես գնում. գժվեցի՞ր, ի՞նչ է:

—Մնաս բարով, բօղազս հասցըիր,—գոռացնա և ցոյց տուեց՝ իբր թէ հեռանում է:

—Աղա, Սարգիս, մի գժվիր. ոտս ցաւեց, սիրտս նեղացաւ, սիրտս հանգստացնելու համար մի քանի ցուրտ խօսք ասացի. ինչ նեղանալու բան կայ:

Սարգիսը, ցոյց տալով թէ հեռացաւ, զգուշութեամբ մօտեցաւ և գլուխը կոխելով ուսերի մէջ կիսամպիտը դէմքին՝ կուչ եկաւ պատի տակ:

—Սարգիս, էյ... Սարգիս, Աստուծուն մտիկ տուր, հօ ախմախ չես, ուր ես գնում. վայ... Սարգիս... յետ արի, բարամ, յետ արի:

Սարգիսը լուռ էր. մի ձեռքով բռնել էր իր քիթը, միւսով բերանը, որ չը փրթկայ:

Ծերուկը վախեցաւ, որ մենակ մնաց, յուսահատ ձայնով կանչեց.

—Սարգիս, Սարգիս...

Սարգիսը աւելի կուչ եկաւ և սպասում էր, թէ ինչ է լինելու:

—Չը լինի թէ էս անաստուածը մենակ թողեց ու գնաց. բա ես ինչ անեմ, որ ջիանդամը գնամ:

Զուրը կաթում էր նրա ցնցոտիներից. նա ամբողջ մարմնով դողում էր և հաղիւ էր կանգնում ոտի վրա:

—Անաստուած, էս օյին էր, էս օյին էր...

Նու սկսեց մխկտալով լալ: Սպիտակ, կեղտոտ, գզզված միրուքը տատանվում էր նրա հեկեկանքներից.

—Պու... պու...

Նա ձայն լսելով ցնցվեց, գլուխը բնազդմամբ այս ու այն կողմ տարաւ՝ կարծես ուղում էր տեսնել. մի վայրկեան լուռ, լարված ուշադրութեամբ սպասեց, որ նորից լսի, թէ որտեղից եկաւ ձայնը:

Բայց ձայնը չը կրկնվեց:

Մի ժպիտ խաղաց նրա դէմքի վրա և էլի խկոյն մարեց:

Ձեռներով չօշափեց, այս ու այն կողմ ընկաւ, բայց ձեռները ոչնչի չը կպան: Նա վախենում էր մի աւելորդ քայլ անել, որպէս զի էլի առուի մէջը չընկնի:

—Բա էդ նկ էր: Եա Յիսուս Քրիստոս, դու օգնական,—գլուխը դէպի երկինք ուղղելով՝ մրմնջաց նա:

—Մմ...ո...ո...

—Փշօլ:

—Ռոռ... հաւ-հաւ...

Ծերուկը կանգնած տեղը նստեց:

—Այ թուլա, այ թուլա,—մեղմ ձայնով նա սկսեց շոյել շանը:

Սարգիսը չը կարողացաւ այլ ես զսպել իրան, մի անգամ էլ մռուացրեց, հազար ու փորը բռնած հոհուալով առաջ եկաւ:

— Վայ, վայ, վայ, Սարգիս ջան. Սարգիս ջան, էստեղ ես, էստեղ ես... քեզ դուրբան, էստեղ ես, — ուրախութիւնից լալկան ձայնով մրմնջում էր նա:

— Հը, մնց ես... այ, էսպէս մի օր կը թողնեմ ու եալահ, քուչի մէջտեղը կը թողնեմ:

— Վայ, ջան, ջան Սարգիս, էդ դռւ ես մի մօտ արի, այ բալամ ախար ինձ խի՞ ես չարչարում. բա էդպէս հանաք կը լինի՞ այ քեզ մատաղ, ախար դու իմ աչքն ես, առանց քեզ ես որ ջհանդամը գնամ: Բա էդ հանաք է, որ դու ես անում:

— Էտէնց է, էտէնց. թէ մէկ էլ նեղացրել ես, քուֆուր ես տուել՝ գնալու եմ:

— Սարգիս ջան, քեզ մատաղ ախար ես ծերեմ, համբերութիւն չը կայ, ցեխի մէջ քցեցիր, ուստ եարալու արիլ, սիրտս նեղացաւ, քեզ մատաղ, մի նեղանայ:

— Դէ, գնանք, մի մի բումկա արադ խմնք, մի քէչ տաքանանք:

— Գնանք քեզ մատաղ: Արադի էլ զօնաղ կանեմ, գնանք. դողս բռնել, էր, կարծում էի թէ փողոցումն եմ մեռնելու. փառք քեզ, փառքդ շատ լինի Ասուած:

— Դէ, գնանք, գնանք, մեղք ես:

Նա փէշը տուեց ծերուկին ու առաջընկաւ:

— Հէ-հէ-հէ, Սարգիս ջան, լաւ օյին եկար գլխիս:

Թ. Ո Ղ Ն Ի Ա Ռ Ե

Ամբողջ շաբաթ է, որ մենք ապրում ենք պատ-պատի կպած: Ես նրան չեմ ճանաչում: Մի անգամ միայն պատահեցի նրան աստիճանների վրա. նա արագ, առանց ինձ նայելու, վեր բարձրացաւ: Նա այնքան արագ անցաւ մօտիցս, որ ես չը կարողացայ յիշել անգամ նրա դէմքը, կարծես նա խուսափում էր ինձանից: Ո՞վ է նա:

Երբ նոր էի տեղափոխվել սենեակս, երեմն նրա սենեակից լսում էի տղամարդու ձայն, բայց վաղուց այդ ձայնը այլևս չէ լսվում:

Երեկոյ էր: Սենեակումս նստած ես պարապում էի, երբ լսեցի, որ պատի միւս կողմը նա լալիս էր. ես ոտքի ելայ, լարված ուշադրութեամբ հետևեցի. այս նա էր. նա մենակ լալիս էր այնպէս աղեկտուր, որ ես մի վայրկեան մտածեցի՝ գնալ բաղինել դուռը, հարցնել նրա վշտի պատճառը և, եթէ կարող եմ, մի բանով օգնել նրան: Ինձ լուրջ կերպով սկսել էր հետաքրքրել նա. ես արդէն երեակայում էի նրան գունատ, մոայլ, թախծալի աչքերով, նուրբ գծագրութեամբ. նրա ձայնը պէտք է որ մեղմ լինի.

չը գիտեմ ինչու, բայց ինձ թւում էր, որ նա
մի օր կը գայ ինձ մօտ, ամեն օր ես սպասում
էի նրան, բայց նա չէր գալիս:

Այսօր նրա սենեակից աղմուկ էր լսվում.
ես լսում էի կցկոուր խօսքեր, բայց միաքը չէի
կարողանում կապել: Խօսողը տանտիկինն էր. խօ-
սում էր կոպիտ. իսկ նա խնդրում էր, աղեր-
սում. մի քիչ անց՝ նա էլի սկսեց լալ, և ական-
ջիս հասաւ տանտիկնոջ խօսքերը՝

—Մինչև վաղը առաւօտ,—և դռան շրխկոցը:

Մի քիչ անց—դուռս առանց բաղսելու՝ ինձ
մօտ ներս մտաւ տանտիկնոջ 9 տարեկան տղան:

—Ի՞նչ ես ուզում՝

—Օրիորդը խնդրում է, արդեօք չը գիտէք
Թիֆլիսից երբ են գնացքները գալիս:

—Իսկոյն կը նայեմ: Ինչի՞դ է պէտք:

—Այո, այդ օրիորդն է հարցնում:

Ես լրագրի մէջ նայեցի և ասացի գնացքնե-
րի ժամերը:

—Դու կը յիշէս. կուզես՝ վերցրու լրագիրը:
Դուռը կամաց բացվեց և երկաց մի զլուխ,
որ վախենալով էլի յետ քաշվեց:

—Խնդրեմ:

—Ներեցէք...

—Խնդրեմ, ինդրեմ:

Նա ներս մտաւ և թեթև շփոթված կանդ-

նեց լուռ, կարծես ուզում էր մի բան ասել և
չէր համարձակվում:

—Դուք դնացքների ժամերն էիք ուզել: Ա-
հա. առաւօտեան ժամը 9-ին, ցերեկվայ ժամը
4-ին և գիշերվայ ժամը 12-ին:

—12-ին էլ կայ: Շնորհակալ եմ:

—Այս. դուք մէկին սպասում էք:

—Նա խոստացել էր... 5 օր առաջ այստեղ
պիտի լինէր, բայց ահա 5 օր է՝ չը կայ:

—Նստեցէք, խնդրեմ:

—Շնորհակալ եմ:

Նա նստեց. մի պահ լուռ էր, ուզեց մի բան
ասել, բայց տատանվում էր: Փոքրիկը, տեսնե-
լով որ այլևս հարկաւոր չէ, դուքս գնաց:

—Դուք երկի անհանգիստ էք, որ ուշացել է:

—Այո, ի հարկէ. 5 օր է, որ ես սպասում
եմ: Տանտիկինը նեղում է. նա ուզում է սե-
նեակն ուրիշին տալ:

—Բայց չէ որ դուք էք ապրում:

—Այո, բայց ժամանակը լրացել է, ես ո-
չինչ չունեմ, որ տամ. Նա գնաց, խոստանալով
15 օրից վերադառնալ: Նա 18-ին է գնացել.
իսկ այսօր 6-ն է:

—Երկի մի բան արգելք է եղել... Ուր է
գնացել:

—Զը գիտեմ, նա չասաց: Ասաց, որ հեռա-

գիր է ստացել, թէ մայրը հիւանդ է և պէտք է գնայ:

— Նա դեռ կարող է գալ. գուցէ մի բան է պատահել:

— Այո, — ուրախացած բացագանչեց. — Նա կը գայ, այնպէս չէ, կը գայ: Ես էլ տանտիկնոջը ասում եմ. նա միմիայն 15 օր կարող էր մնալ: Նա արձակուրդի թուղթը ցոյց տուեց ինձ. չէ որ նա կարող է զրկուել տեղից: Միթէ նա կարող էր այդպէս խաբել:

— Ո՞վ է նա:

— Նա... Ես ապրում էի նրա հետ... Ես ուզում էի... Ես սիրում եմ նրան. նա էլ ինձ էր սիրում: Նա ազնիւ մարդ է. Ես չեմ կարող հաւատալ, որ նա խարել է ինձ: Տանտիկինը ասում է, որ նա էլ չի վերադառնայ: Բայց ես ինչպէս հաւատամ. չէ որ ես նրա համար թողեցի ամեն բան, մայր, քոյր, եղբայրներ... Մայրս անիծեց ինձ... Եղբայրներս եթէ հանդիպեն՝ ինձ կը սպանեն...

Նա լոեց և թաշկինակը սեղմեց աչքերին:

— Վաղեւց է՝ ինչ նրա հետ էք, — մի քիչ լոռութիւնից յետոյ հարցը ես:

— Յ ամիս 10 օր... Այժմ ես ինչ անեմ. ոչ մի կօպէկ չունեմ: Գնալուց նա ինձ 10 ր. առաջարկեց, ես չը վերցրի: Ինչի՞ս էր պէտք. 15 օրվայ փողը տրված էր. ամեն բան կար: Ինչի՞ս էր պէտք... Ի՞նչ անեմ այժմ...

— Դուք ծանօթներ չունէք... Ոչ ոք:

— Ոչ ոք չունեմ... Ոչ ոք... Դուքս կանի տնից և ես ուղղակի փողոցում կը մնամ...:

— Վերադարձէք առւն:

— Ոչ, ոչ...

— Նրանք կարող են ներել այդ սխալը:

— Ոչ... Մոռում է փողոց... փողոց...

Նա սկսեց հեկեկալ:

Ես աշխատում էի հանգստացնել, ասել, որ թող չը յուսահատվի, դեռ կարող է գալ, բայց ոչ մի բան չէր օգնում:

— Այ, ջուր խմէք, կը հանգստանաք:

Նա մի կում վերցրեց, կախ ձգեց պղուխը և թաշկինակը սեղմեց աչքերին:

— Ինչպէս, ինչպէս հաւատալ մարդկանց. Չէ որ նա երդում էր, որ սիրում է: Ես ոչ ոքի վրա նայել անգամ չէի ուզում. ուրիշ ոչ ոք գոյութիւն չունէր ինձ համար: Նա ինձ համար ամեն ինչ էր, բայց թողեց ու գնաց... Գնալուց ինչքան ինդրեց տանտիկնոջը, որ ինձ լաւ նայի, որ մենակ չը թողնի, չը թողնի որ տիրեմ, և խարեց... Դա անհնար է. Ես չեմ հաւատում, չեմ հաւատում. Նա այդ չի անի...

Դուռը մի քանի անգամ խփեցին: ✓

— Ներս մտէք, — կանչեցի ես:

Ներս մտաւ տանտիկինը.

— Դուք ասացէք, ես ի՞նչ անեմ, չէ՞ որ ես

Էլ աղքատ կին եմ, դրանով եմ ապրում. լաւ,
պահեմ մի օր, երկու օր, երեք օր. հօ չեմ կա-
րող շարունակ:

—Այս, բայց մի-երկու օր էլ սպասէք, դու-
ցէ գալիս է:

—Ես ասում եմ, որ այլ ևս չէ գալու: Ես
այսօր եղել եմ նրա ընկերոջ մօտ. ասում է՝
դուքս արէք, թող ուր ուզում է՝ գնայ, նա էլ
չէ գալու... էլ ի՞նչ ես ուզում:

Աղջիկը նորից սկսեց հեկեկալ... Մի վայր-
կեան անց՝ արագ բարձրացաւ և առանց մի խօսք
ասելու դուքս գնաց:

—Ես ի՞նչ անեմ. ես ի՞նչ կարող եմ անել:
—Նա խաբել է:

—Ի հարկէ, խաբել է ու փախել. СВОЛОЧЬ...
Տեսնում էք ինչ տեսակ մարդիկ կան աշխար-
հում: Ի՞նչ անի հիմա խեղճը. իմ մեղքս էլ է
գալիս, բայց հօ չեմ կարող ձրի պահել. ես էլ
աղքատ կին եմ, դրանով եմ ապրում, հօ չեմ
կարող, —ասաց նա ու դուքս գնաց:

Այդ գիշեր ես շատ վատ քննեցի. հարեւանու-
հիս շատ անհանգիստ էր, նա ինչ-որ անում էր.
Երբեմն լսվում էր նրա լացի ձայնը:

Առաւօտեան վաղ՝ ես գեռ քնած էի, երբ
կարծես երազում լսեցի աղմուկ: Ես արագ վեր
թռայ: Հարևան սենեակից լսվում էին խօսակ-

ցութեան ձայներ, իրարանցում: Ես արագ հագ-
նըւեցի և շատապեցի այնտեղ: Դուան առաջ հա-
ւաքվել էին տղամարդիկ, կանայք, ոստիկաններ:

—Ի՞նչ է պատահել, —հարցը առաջին պա-
տահածին:

—Կախվել է.

—Ո՞վ, ինչու:

—Մի ջահել կին է... Ով գիտէ ի՞նչ է պա-
տահածիլ:

ԳԱՂՏՆԻՔ

Նա ոչինչ չէր թողել:

Ոչ ոքի ոչ մի խօսք չասաց: Երեկոյեան մօտ էր, որ նստեց մակոյկը և սկսեց թիավարել դէպի բաց ծովը և էլ չը վերադարձաւ:

Ծերունի հայրը և երկու ձկնորսներ ամբողջ գիշերը ծովի վրայ որոնում էին նրան: Խաւարի մէջ ձայն էին տալիս, կանչում: Նրանց ձայները գնում էին ջրերի վրայով և անհետանում այն սև խաւարի մէջ:

Լուսաբացին մօտ էր, որ ձկնորսներից մէկը նկատեց մի ինչոր սև բան, և սկսեցին թիավարել դէպի այդ կէտը, որը մի քիչ անց՝ պարզ երևաց, որ մակոյկ է:

Ծերուկի սիրառ արագ բարախում էր. երկու ձկնորսները եռանդով թիավարում էին:

Կապոյտ ջրերի վրա երկում էր մակոյկը, որը աննպատակ օրօրփում էր, ինքն իրան յանձնած ալիքների, ջրերի քմահաճոյքին, որ տանեն՝ ուր կուզեն:

Արդէն դադարել էին թիավարել. բոլորովին մօտ էին: Մակոյկի մէջ ոչ ոք չը կար. մեղմ

ալիքների վրա տարուքերվում էր փոքրիկ, անդեկ, անառազատ մակոյկը:

— Գուցէ քնած է, — ասաց ձկնորսներից մէկը և արագ ցատկեց մակոյկը, չը սպասելով որ կեռով բոլորովին մօտ քաշեն:

Այս միտքը որ կարող էր նաւակի մէջ քնած մինել, այդ էլ չը ճշգրից. նաւակը դատարկ էր, միայն նաւակի յատակում թափված էին նրա զգեստները:

Ծերունի հայրը ամբողջ գիշերը տանջված էր վնասրելուց, կասկածներից ու ենթադրութիւններից: Նա մինչև այդ՝ վախենում էր մտածել անգամ, որ մի վանդ լինէր պատահած, և ինքն իրան հաւատացնում էր, թէ ոչինչ չը կայ յուսահատվելու: Իսկ երբ տեսաւ մակոյկը դատարկ, նա այլևս չը կարողացաւ իրան զսպել, կտրված ծառի պէս փուլեց մակոյկի մէջ ու բարձրածայն սկսեց հեկեկալ:

Երկու ձկնորսները լուռ կանգնած էին և չը գիտեին ինչպէս հանգստացնել ծերուկին: Նրանք խօսք չէին գտնում ասելու:

Միայն ճայերն էին, որ անտարբեր այդ մեծ վշտի առաջ՝ ճշալով, որընթաց իջնում էին, գլուխները խրում ջրի մէջ, մի վայրկեան թափահարում թևերն ու նորից բարձրանում, միշտ աչքերը ցած՝ ջրին, որ չը վախցնեն որսը:

Ձկնորսներից մէկը յանկարծ յիշեց, որ մեռ-



նելու. համար պէտք չէր մերկանալ, և բարձրածայն յայտնեց իր միտքը Միւսն էլ համաձայն վեց:

Ծերունին լսեց այդ խօսքերը, արագ բարձրացրեց զլուխը, դողալով որբեց արցունքները, մի վայրկեան ապուշ մնաց նստած տեղը, ու յանկարծ մի թեթև յոյտ ծառեց նրա սրտում, թէ գուցէ գեռ ամեն ինչ կորած չէ:

Նորից տիրեց լոռութիւն: Ոչ ոք չը դիմէր, թէ ինչ պէտք է անել այժմ՝ Որոշեցին վերադանալ զիւղ, վերցնել էլի մարդիկ և փնտուել ափերը: Մակոյկը կապեցին առաջաստանաւին և սկսեցին թիւավարել դէպի հեռւում երեացող վարքիկ կիւղը:

Ծերունին երկար ժամանակ չէր համոզվում վերադանալ: Եա ուզում էր մնալ նաւակում, մինչև մէկնումէկը կերթար և նոր մարդիկ կը բերէր: Բայց երկու ձկնորսները համոզեցին նրան, որ իզուր է ծովի վրայ մնալ ու սպասել և աւելի լաւ է գնան բոլորը:

Ծերուկը լուռ, գունատ նստած էր մակոյկի ետեի մասում և անմիտ արտայայտութեամբ նայում էր հեռու ջրերին: Ոչ ոք ոչինչ չէր խօսում. լուռ թիավարում էին ու առաջ սահում, իսկ ետեից փոքրիկ մակոյկը: Արդէն լաւում էին ափում կանգնածների ձայները, որոնք անհամբեր սպասում էին նաև երկալուն:

Ծերուկը յանկարծ սեղմեց ճերմակ գլուխը

Ճեռների մէջ, և արցունքները թափվեցին նրա աչքերից: Առաջին անգամ նա յիշեց իր պառաւին, որը ափում կանգնած արտարով սպասում էր որդուն: ինչ պէտք է ասի նա նրան... ինչ է եղել նրա միակ որդին:

Արդէն ափից լսելի են նրանց ձայները: Նրանք արդէն նկատել են, որ նաւակի ետերց լողում է փոքրիկ մակոյկը:

Մօր սիրտը՝ մորթված հաւի պէտ թրփրտում էր կրծքի տակ. «Սէրգէյ... Սէրգէյ...» ու զում էր կանչել նա, բայց միայն շըմունքներն էին շարժվում:

—Գտանք, —կանչում էին ափից:

Բայց նաւակից ոչ մի ձայն չը կար. նա լուռ լողում էր դէպի ափը: Թիակի ամեն մի շարժման հետ մեծանում ու մեծանում էր ափում կանգնածների յուսահատութիւնն ու սարսափը:

Նաւակը արդէն մօտ էր ափին. ձկնորսներից մէկը մինչև գօտիկը մտաւ ջրի մէջ և նաւակին կապած թոկը սկսեց ձգել դէպի տախտակամածը. ափում կանգնածներն էլ օգնեցին:

Ծերուկի կոմերից բռնած գուրս հանեցին նաւակից: Եա ոչ մի խօսք չը կարողացաւ արտասանել. գրկեց իր պառաւին և արցունքները կուլ տալով մրմթջաց.

— Մի վախենալ, ոչինչ, ոչինչ չէ պատահել,
դեռ ամեն ինչ կորած չէ, յոյս կայ...

Բայց մայրը երբ տեսաւ մակոյկը դատարկ,
երբ տեսաւ ծերուկին, աչքերը սևացան, և նա
թուլացած՝ ուշաթափ մնաց ծերուկի գրկում:

Եւ այդպէս ուշաթափ նրան տուն հասցըին:
Նա մի քանի անգամ ուշքի եկաւ և նորից իս-
կոյն կորցրեց գիտակցութիւնը:

Լուրը արագ տարածվեց. ոստիկանութիւնն
էլ եկաւ. խուզարկեցին մակոյկը, մէջը թափ-
ված զգեստները և գտան թաշկինակ, ծխախոտի
տուփ, փողաման, մէջը 13 ըռուբլի, և մի հեռա-
գիր՝ երկու օր առաջ ստացված:

Հեռագրողի անունը չը կար, երեք խօսք
կար՝ «Ապրիր, եթէ կարող ես»:

Մի քանի մակոյիներ ուռկաններով գնացին
ծովը փնտուելու:

* *

Մի ամիս չը կար, որ նա վերադարձել էր
ծնողների մօտ: Այդ լոլոր ժամանակամիջոցում
նա շրջապատված էր ծնողների յարկի տակ փա-
ղաքանքով ու սիրով:

Բայց այն տասն տարին, որ նա հեռու է
եղել հայրենի յարկից, նրան կարծես օտարաց-
րել էին:

Այն տասն տարին, որ նա անց էր կացրել
օտարութեան մէջ, նրան այնքան էին փոխել,

որ ծնողներն անգամ դժուարութեամբ ճանաչե-
ցին այն որդուն, որ նոյն այդ տեղում տասը
տարի առաջ յանձնել էին ծովին: Այն ժամանակ
նա 21 տարեկան էր, այնպէս ուրախ և աշխոյժ,
այժմ տասն տարուց յետոյ՝ նա վերադարձել է
տղամարդ գարձած, մռայլ, գունատ:

Նրանք ոչինչ չը գիտէին, թէ նա ինչպէս է
ապրել օտարութեան մէջ:

Նա միայն մի անգամ ժապայ, երբ առա-
ջին անգամ նաւի մէջ մօտեցաւ գրկելու հօրն
ու մօրը:

Այնպէս դանդաղ էր անցել ժամանակը,
տխուր, ձանձրալի. այդ տասն տարին սահել էին
կրիայի քայլերով: Բայց այժմ ծերունիներին
թւում էր, որ երեկ էր, և նրանք կարծես չէին
ուզում հաւատալ, որ դա իրանց որդին է: Նրանց
մտապատկերում նա մնացել էր նոյն ուրախ, ա-
ռողջ պատանին, որը այժմ փոխուել է, ժամա-
նակից առաջ ծերացել, գունատ, 30-ն անցրած
մի տղամարդ: Դեռ այն ժամանակ ծովափի մի-
յարկանի տունն էլ ուրիշ տեսք ունէր, այժմ
նա էլ է փոխուել, այլ ևս այնպէս պայծառ չէ,
ինչպէս այն ժամանակ. բոլորը փոխուել է. միայն
ծովն է մնացել նոյնը, նա է, որ չէ ծերանում
և անվերջ հառաջում է ու խփում ափերին:
Գրանք էլ ծերացել են, բայց նրանք չէին ու-

զում, որ այդ միակ որդին էլ ծերանար այն-
պէս շուտում ըստ մոռն որ անրդու միա մէջ

Այդ տասն տարբուայ ընթացքում նա ոչ մի
անգամ չեկաւ ծնողներին տեսնելու, չը նայելով
որ իւրաքանչիւր նամակում մայրը աղերսում
էր: Տարին 2—3 նամակ էր գրում, որ առողջ
է, և ուրիշ ոչինչ:

Բայց մի օր յանկարծ բոլորովինս ահապատ-
սելի հեռագիր ստացան, որ գալիս էլ և անուրա-
խութիւնից լաց եղանակ:

Հայրը, մայրը չը գիտէին ինչ անեն, և որտ-
պէսզի նա գոհ և ուրախ լինէր: Նրանք պատ-
րաստ էին նրա իւրաքանչիւր քմահաճոյքը կա-
տարելու:

Մայրը շարունակ պատվում էր նրա շուրջը
և ուզում էր գուշակել նրա իւրաքանչիւր ցան-
կութիւնը, որպէսզի աւելի առաջ կատարի, քան
կասեն նրան:

Որդին տիսուր էր, մօր աղաչանքներին նոր
պատասխանում էր՝ «Ոչինչ չէ պատահել ինձ
հետ, բնաւորութիւնս է այսպէս. թող ինձ...»:

Բայց մի ներքին ծայն շարունակ նրան աշ-
սում էր՝ «Մի մեծ վիշտ կրծում է որդուդ սիր-
տը, հետեւիր նրան, լաւ հետեւիր, թէ չէ կը
թոչի»:

Երբեմն երկու ծերերը նստում էին իրանց
ննջարանում քնելուց առաջ և մտածում, մտա-

ծում էին ուսուչ մի եզրակացաւթեան չէին դալիս:
Ի՞նչ ցաւէ, որ այդպէս տանջում է նրան,
և որը չի ուժում յայտնել իրանց:

Բայց յունահատուած պատկում էին, և լուս-
ամին մէկը իր համար շարունակում էր մտա-
ծել, տանջւել երկար ոչ մէկը չէր քնում, բայց
կարծելով որ միւսը քնած է՝ լուսում էին:

Ճատ անգամ կամաց, այնքան կամաց, որ
ամուսինը չը լիի գլուխը թաղած բարձերի մէջ
լալիս էր մայրը: Ծերուկը լսում էր, ուզում էր
հանգստացնել, բայց ոչինչ չէր գտնում ասելու:

Դիմակը գեռ գտնված չէր պահանջներին մայսունուն
Հեռագրի մէջ գրված երեք խօսքը՝ «Ապ-
րիր, եթէ կարող ես», — « ոչ չիմացաւ. շատ
գուշակութիւններ, ենթադրութիւններ արին, բայց
դրական ոչինչ չը գիտէին:

Միայն պարզ էր, և ամենքը գիտէին, որ նա
չը կարողացաւ ապրել:

Երեք օր անց՝ ձկնորսները գտել էին քայ-
քայված դիմակը հեռու ափերում:

Նոյն այդ օրը, երբ գտնված էր դիմակը,
լրագիրներում տպված էր մի սոսկալի դրամայի
մասին:

Մի գաղանացած կին մորթում է իր երկու

զաւակներին և նոյն դանակով մի քանի անդամ
հարուածում է իր սրտին և մեռնում:

Նա մի նամակ է թողել հետեւեալ բովան-
դակութեամբ՝ «թող այժմ ապրի, եթէ կարող է»:

Նոյն խօսքերն էին գրված և այն հեռազրի
մէջ, որ գտել էին Սէրգէյի գրպանում:

Ոչ ոք չը գիտէր, թէ ինչ կապ կար այդ
դրամայի և հեռազրի միջե, բայց բոլորը համոզ-
ված էին, որ գա հասարակ զուգագիպութիւն չէ:

Եւ բոլորը՝ ինչպէս ժամատախից բռնված՝
դիակից փախան:

Հայրն ու մայրը մի կերպ աջողեցրին քրիս-
տոնէական ծիսակատարութիւն, և թաղեցին ընդ-
հանուր գերեզմանատնից դուրս:

ՍՊԱՌԴԱՆՈՅՈՒՄ

Դուք տեսէլ էք, թէ ինչ սառը, անտարբեր
կերպով մորթում են այն խեղա անասուններին,
որոնց վիճակված է սպանդանոցում մեռնել...
Որպիսի ողորմելի բառաչ են արձակում նրանք,
երբ առաջին անգամ սպանդանոց մտնելուց
աշքներն ընկնում է իրանց ցեղակիցների կտրված
վզի վրա... Սարսափած նրանք յետ-յետ են փախ-
չում, կարծես զգալով այդ բոլոր սարսափը:

Բայց ոյժով ներս են ձգում նրանց:

Վեց ուժեղ ձեռներ եղջիւքներից բռնած,
ծեծելով առաջ են քաշում, ճկում վիզը, գլո-
րում... Նա ընկած տեղն էլ յուսահատ ճիգեր
է թափում վեր կենալու, ցնցվում է ամբողջ
մարմնով... Իզուր... Սուր դանակը կատարում
է իր գործը:

Տեսէլ էք, թէ ինչ խիստ են պատփում ու-
ժեղներին, որոնց չեն կարողանում միանգամից
զլորել... Բարակ սուր դանակը մեխավում է ծոծ-
րակի մէջ. մի վայրկեան նա գեռ չէ զգում
հարուածի մահաբեր լինելը... Նա գեռ կանգնած
է, աշքերը գալարվում են, վէրքից արիւնը շատ-

բուանի պէս դուքս է խփում, տաք, կարմիր արիւնը: Կամաց-կամաց թուլանում է, հայեացքը պաղում, մի վայրկեան էլ, նա գլորվում է լուռ, անձայն...

Կտրված վղից արեւնը դուրս է վիժում փրբ-
փրալով. արեան ժայթքումի հետ խուլ ձայներ
են լսվում. կարծեա անէծք է թափում մարդ-
կանց գիշին:

Նրան հետեւում է մի ուրիշը՝
ինչքան դիակներ են թափված, դիակներ,
որոնք մի քիչ առաջ ապրում էին, որոնք չեն
մտածում մեռնել, որոնք ուղում էին ապրել...
Արիւնը յատակի ծակերից թափվում է ծովը-
ալիքները կարմրել են, փրփրում ու կատաղած
գարնփում ափերին ու յուսահատ փշրում...

Դրսից լավում է կենդանի մնացածների բառաշը. Նրանք էլ կարծես նախազգում են, որ իրանց վախճանն էլ մօտ է:

— Վաղը այս բոլորը պէտք է ուստինք...
Ես սարսափեցի:

— Պէտք է ուսե՞նք... ուսե՞նք... մենք ըստ
լորս... գայլ... արջ... բորենի.., շուն...:

ԵՐԵՒՔ

Անշուշտ դագաղի մէջ պըլած էր նա սեղանի
կրայ:

9. Թվակերել և ոտների մօտ մոմերը բոցկառող
բոցով վառվում էին. Դագաղից մի փոքր հեռու,
նստած էր ալեխառն մագերով կարճահասակ մի
մարդ և միալար թագնորդայնով սաղմոս էր
կարդում:

Կէս գիշերից անց էր Նաջեցեալի սենեակին
կից սենեակը լուսաւորված էր լուսնի լոյսով
որը թափվել էր պատուհանից ներս մի ինչոր
կախարդիչ, խորհրդակոր բան սփռելով շուրջը
կուսնի լոյսով հազիւ նշմարվում էր հաղիւ 17
տարեկան գումատ մի աղջիկ, որը նստած էր
պատուհանի մօտ. Նրա հայեացքը տառել էր մի
կէտի, գէմքը ոչինչ չէր արտայայտում: Նրանից
մի քիչ հեռու նստած էր գլուխը ձեռների մէջ
մի տղայ: Եղա — ... մարտաց քիչու

Երկար նրանք այդպէս լուռ անշարժ նըստած էին: Նրանցից ոչ մէկը կարծես չէր ուղում շարժվել, ձայն հանել:

Փողոցից էլոչ մի ձայն չէր գալիս. միմիայն միւս սենեակից լավում էր ծերուկի տիսուր

միալար ձայնը, որը կարծես թէ լսվում էր հեռուից, գետնի խորքից, մերթ ուժեղ, մերթ նուազ, համարեա անլսելի:

Ըսթերցումը յանկարծ ընդհատվեց, մի քիչ անց՝ մի բան ընկաւ յատակի վրայ, և տղան ու աղջկը լուռ նայեցին միմիանց:

—Այդ ի՞նչ ձայն էր:

—Գիրքն ընկաւ երկի քնեց, —պատասխանեց տղան, տեղից չը շարժվելով:

—Վերջապէս:

—Լուսիկ, գնա հանգստացիր, —գլուխը բարձրացնելով ասաց տղան:

Աղջկը ոչինչ չը պատասխանեց. ձեռքի թաշկինակը ամուր սեղմեց աչքերին, կարծես խեղդելու արցունքները. նա լուռ հեկեկում էր: Յանկարծ, կարծես չը կարողանալով զսպել յամառ արցունքները թողեց որ թափւեն:

Տղան լուռ էր. նա ուզում էր մօտենալ քրօջը, հանգստացնել բայց նրան թւաց թէ բերանը չի բացվում, ոտները չեն հնազանդւում, չէ կարող արտասանել ոչ մի խօսք, որ ձայն էլ չը կայ:

—Լուսիկ, բաւական է...—կարծես ոյժով ասաց նա և լուց:

Աղջկը լուռ անցաւ հարեւան սենեակը և ընկաւ մահճակալի վրաւ:

Տղան մօտեցաւ լուսամուտին, սկսեց հետեւել լուսնի ընթացքին, որը կարծես լողում էր այդ

ջինջ կապոյտ ծովում: Աստղերը երկիւղածութեամբ ճանապարհ էին տալիս իրանց թախծալի տիրուհուն: Նա մի տեսակ ինքնամոռացութեան մէջ ընկաւ: ոչինչ չէր յիշում. ամեն բան երազի նման էր: Յանկարծ նա ցնցվեց, ականջին հասաւ քրոջ լացի ձայնը, ու զիմեց գէպի նրա սենեակը:

—Բաւական է, դադարիր, լուսիկ, դադարիր, չէ որ դա անմտութիւն է:

—Գիտես, մենք էլ երբէք, երբէք չենք տեսնելու մայրիկին, — շշնջաց աղջկը հեկեկանքների միջից և ընկաւ եղօր գիրկը:

—Երբէք... երբէք... երբէք..., —մի քանի անգամ մտքում կրկնեց տղան և չը կարողացաւ ոչինչ ասել:

—Դու զիտես, Սուրէն, ես չեմ ուզում հաւատալ. ինձ թւում է, թէ նա ապրում է, մէկը կարծես շարունակ շշնջում է, որ նա ապրում է, ապրում է... Ես ուզում եմ հաւատալ, որ նա ապրում է, որ յափտեան չը գնաց, նորից մի որեէ ժամանակ կը գայ մեղ մօտ. ուզում եմ հաւատալ, որ ապրում է:

—Այո, գուցէ, մի աւելի լաւ կեանքում:

—Դու հաւատում ես այդ կեանքին:

—Հաւատում եմ: Այս:

—Չը գիտեմ, մի կեանք, որտեղ չը կայ, ոչ վիշտ. ոչ հոգս. ի՞նչ լաւ է հաւատալ: Դա կը

լինէր ամի յոյս, որից մենք պինդ պինդ կը բռն-
նէինք, կը յուսայինք, որ մի որհեծ ժամանակ
մենք նորից կը հանդիպենք և էլ երբէք չենք
բաժանվիր Ես, Սուրբն, ուզում Եմ հաւատալ:
Հանգստացիր, Էռուսիկ, քո նեարդերը լար-
ված են, պառկիր:

—Ոչ, ես չեմ կարող, չեմ կարող: աչքիս
առաջ կրակի նման տառերով գրված են՝ «Եր-
բէք, երբէք»: Փակում եմ աչքերո՞ն նրանք աւե-
լի են պայծառանում: Նասիր մօտս, շատ մօտ.
տյղպէս, երբադուամօտս ես, ես դեռ կարողա-
նում եմ յուսալ:

Նրանք լուռ, երկար նստած էին. աղջիկը
բռնել էր եղբօր ձեռքը իր պաղ, ձիւնի նման
սառը ձեռներում և լայն բացած աչքերով նա-
յում էր ուղիղ մի կէտի:

—Դու չը քննես, Սուրբն:
—Իմ քունս չէ տանում: Ասա-
—Իմ էլ չէ տանում, բայց այսպէս յոգ-
նած եմ: Դու նստիր կողքիս, ես թէք կընկնեմ:
Աղջիկը զլուխը դրեց բարձի վրա և մի բոպէ
անցած նա քնած էր:

Չորս կողմը լուռ էր: Տղան անշարժ նստած
էր. մաքերը ցըված էին. մանկական յիշողու-
թիւնները շարան-շարան դալիս անցնում էին
ոչ մի բանի վրա կանդ չառնելով: Նա դադարեց

մաածելուց, անշարժ արձանի նման, նաև մեխ-
ված էր իր տեղաւմ:
Ժամացոյցը երեք անգան զարկեց, և սե-
նեակում նորից տիրեց լուռթիւն:
Մի քիչ անց՝ տղան սպասափանար վեր
ցատկեց տեղից, կարծեմ մէկը ամուր ցնցեց
նրան:

—Ո՞վ է... ով է... —մի քանի անգամ
հարցուց նա, դիակի նման գժգոյն դէմքով:
—Ես եմ, մի վախենար:
—Մայրիկ, —ճւաց տղան և ուշաթափ ըն-
կաւ գետին:

Մայրը մօտեցաւ, կուցաւ նրա վրա, համ-
բուրեց ճակատը:

—Մի վախենար, վեր կաց: Տղան բացեց աչքերը, նայեց մօրը, նրան
թւաց, թէ երազ է:

—Շւշբէ Եկ, զարթնիք, տղաս, մի վախե-
նար, ես մեռած չեմ, ես շատ էի յոգնել, քնած
էի: Ասա Լուսիկին, թող լաց չը լինի: Երբ ձիւ-
ները հալվեն, երբ ծառերը նորից կանաչեն, ես
կրկին կը գամ ձեզ մօտ և էլ երբէք չեմ թողնի
ձեզ: Սպասեցէք ինձ, հաւատացէք, հաւատացէք,
մնաք նորից կը տեսնենք. ձիւները կը հալւեն,
ես կը գամ և էլ երբէք, երբէք չեմ հեռանայ:
Յիշեցէք ինձ և ես կապրեմ: Ես յոգնած էի,
շատ էի յոգնած. ես մեռած չեմ, քնած եմ. այս-

պէս կազդուրիչ քուն է, ես վաղուց է՝ այսպէս անդորր չէի քնել. ես նորից կը պառկեմ և կը քնեմ: Մի լաք, մենք նորից կը տեսնվենք: Ես ապրում եմ, նոր սկսում եմ ապրել: Այս վերջին քնից յետոյ է որ մարդ սկսում է ապրել: Կեանքը սկսվում է, երբ վերջանում է նրա սկիզբը: Հաւատացէք, հաւատացէք, մենք նորից կը տեսնենք: Ասա լուսիկին, թող լաց չը լինի: Ես յոգնած եմ, ես նորից կը պառկեմ: Իսկ վաղը ես գնալու եմ, հեռու, հեռու, հեռու. ինչքան ճանապարհ կայ գնալու... Յտեսութիւն, ցտեսութիւն:

Նա գանգաղ քայլերով անցաւ միւս սենեակը, վառեց մոմերը, մի անգամ էլ յետ նայեց, «ցտեսութիւն» կանչեց, պառկեց դագաղի մէջ և փակեց աչքերը:

Արդէն լուսանում էր, դպիրը սարսափած վեր թռաւ տեղից, խաչակնքեց երեսը, վերցրեց ոտների մօտ ընկած գիրը և նորից սկսեց կարդալ:

ԽԾՆՈՒԹ-ՌԻՄ

Նա ՅԵ-ը անցրած մի մարդ էր, կարճահասակ, փոս ընկած աչքերով, մազերը միշտ կարճ խուզած, ամառ ձմեռ ամարային վերարկուով: Նա դեռ չէր յիշում, որ մի անգամ ուշացած լինէր խանութից, միշտ՝ բոլորից շուտ՝ սպասում էր խանութի դռան՝ բացվելուն: Նա, կարծես, տիրում էր, որ կիրակի է գալիս. ինչ անէր նա խանութից դուրս. նա կարծես ոչ լեզու ունէր, ոչ էլ խօսել գիտէր. նա միմիայն խանութումն էր իրան լաւ զգում; միմիայն ճոթեղէնի այդ մեջ խանութում: Նա կարծես հէնց դրա համար էլ ծնված էր: Երբ ներս էր մտնում գնողը, նրա խոր ընկած աչքերը փայլում էին, նա մի առանձին բաւականութեամբ էր հրաւիրում գընթղին իր մօտ:

— Խնդրեմ, խնդրեմ. համեցէք:

Խանութի տէրը միշտ գոհ էր, երբ յաճախորդը նրան էր մօտենում, համոզւած լինելով, որ, եթէ չը կարողանայ յաջախորդի ուղածը ծախել, այնուամենայնիւ մի բան կը դժոնի կապելու նըալ վզին:

Այդ օրը յաճախորդների թիւը ահապին էր,

բոլոր գործակատարներն էլ զբաղւած էին։ Ամեն
մէկը կանգնած էր իր յատուկ տեղը։ մէկը մա-
հուգեղին էր ցոյց տալիս իր յաճախորդին,
միւսը չիթ, բումազէ և այն. ամեն մէկն էլ
աշխատում էր բաց չը թողնել գնողին։ Խանու-
թում կեանքը եռում էր։

—Ո՞վ վերցրեց արշինը, —կանչում էր մէկը,
գէս ու դէն նայելով։

—Խնդրեմ այն կողմը գնացէք։

—Այս կտորից չումէք։

Գասպարը կանգնած էր իր տեղում, ուր
թանգագին կտորներն էին, և ոգևորված՝ արագ
իջեցնում էր այս ու այն կտորը, հաւատացնում,
որ դա ամենալաւն է, որ ուրիշ խանութուկ
թող հարցնեն, այստեղ շատ աւելի թանդ է, որ
եթէ այս գնով ուրիշ տեղ կարողանան գնել, նա
ձրի կը տայ, որ իրանք ամենաէժան ծախողնե-
րըն են և այն։

—Ի՞նչ էք ասում, տիկին... Ախ, ներեցէք,
օրիորդ. միթէ չէք հաւանում. հրաշալի կը
տոր է։

—Այո, բայց ուզօրը դուք չէ գալիս։

—Վերջին մօղան, բոլորովին թարմ ապ-
րանք է, այսօր ենք բացել։

—Մի ուրիշը ցոյց տուեք։

Նա արագ իջեցրեց մի թօփ, ճարպիկ կեր-
պով ձեռների մէջ փոփոացնելով կտորը բացեց։

—Ա՛խ, սա չէ... սա՝ գիտեմ որ դուք
չե գայ, —ասաց նա ու մի կողմ նետեց կտորը,
մի վայրկեան մտածեց, այս ու այն կողմ
նայեց ու իջեցրեց մի ուրիշը, որ յաճախորդը
պէտք էր որ հաւանէր։

—Ո՞չ։

Սա էլ չէ. իսկոյն։

Նա մի քիչ մտածեց և կարծես յանկարծ
գտաւ այն, որը ցանկանում էին նրանք, արագ
իջեցրեց և փոեց գնողների առաջ, առանց
ոչինչ ասելու. նա աղջկայ դէմքի արտայայ-
տութիւնից զգաց, որ գտաւ, և մի քիչ լու-
թիւնից յետոյ հարցրեց։

—Ի՞նչպէս է։

—Այս լաւ է։

—Լաւ էլ գին ունի։

—Ի՞նչքան է։

Զեղ համար 2 ը. 80 կ.։

—Օյ, օ, օյ... Ի՞նչ թանդ է։

—Ներեցէք, օրիորդ, հարցրէք ուրիշ տեղ.
Եթէ 3 ը. պակաս գտաք՝ ես ձրի կը տամ։

—Ոչ շատ թանդ է։

—Հաւատացէք, օրիորդ, պակաս չեմ կա-
րող։ Այ, ես ձեզ կը տամ մի ուրիշը, համարեա
նոյնն է արտաքուստ, արժէ 1 ը. 50 կ., —նա
ուզեց վերցնել, բայց աղջիկը կանգնեցրեց։

—Ոչ հարկաւոր չէ, սա լաւ է, բայց շատ
է թանգ:

—Լաւ կտորին տրվածը կորած չէ: Վեր-
ցրէք, չեք զղջայ:

Աղջիկը կտորի ծայրից բռնած խնդրելով
նայեց մօրը. մայրը բացասաբար շարժեց
գլուխը.

—Շատ է թանգ:

—Լաւ, ասացէք, ինչ էք տալիս:

—Եթէ 2 ր. կարելի է...:

—Այս, ոչ, տիկին, ինչ էք ասում, անձնար
է... Այ ես ձեզ մի ուրիշ կտոր ցոյց կը տամ:

—Ոչ, հարկաւոր չէ, եթէ այդ կարելի
է, զիջէք:

—Տիկին, ազնիւ խօսք, դուք աւելի պա-
կաս էք տալիս քան առքն է... Լաւ. ձեզ հա-
մար 30 կօպէկ էլ կը զիջեմ, 2 ր. 50 կ.:

—Տուէք 2-սով:

—Չեմ կարող. կուզէք, ես հաշիւը ցոյց կը
տամ. երդւում եմ, որ աւելի արժէ... դէն 2 ր. 25 կ.:

Ոչ, աւել չեմ կարող:

—Ինչպէս կուզէք, աւելի չեմ կարող պա-
կասեցնել, որդուս արևով երդւում եմ, որան...ք...

Նա յանկարծ կանգ առաւ, վերջին խօս-
քը բերանին. կասես կայծակ խփեց, ակամայ
ձեռքը տարաւ դէպի ճակատը, կուրծքը լցվեց,
աչքերը կարմրեցին. մի բան կարծես խեղդում

էր կոկորդը. նա շուռ եկաւ, թաշկինակը սեղ-
մեց աչքերին... Աղջիկն ու մայրը մի բաղէ հար-
ցական հայեցքով նայեցին միմեանց:

—Ներեցէք, մի քիչ լոռւթիւնից յետոյ ա-
սաց նա, սրբելով՝ աչքերը և դառնալով մօր ու
աղջկանը, աշխատելով թագցնել յուզմունքը:

—Ի՞նչ պատահեց ձեզ:

—Ոչինչ... ես մոռացել էի... յանկարծ յի-
շեցի... ոչինչ... —Կամաց դողալով ասաց նա՝
մեռելի նման գունատ. նրա ներքին շրթունքը
ջղածգաբար դողում էր... —քանի արշին է պէտք:

—Բայց ինչ պատահեց ձեզ, դուք հիւանդ
էք, այսպէս գունասովեցիք:

—Գիտէք, գործի մէջ մարդ ամեն ինչ մո-
ռանում է, վիշտ, ամեն բան... Ես երդվեցի իմ
միակ որդուս արևով. դա ինձ համար ամենա-
թանգագին բանն է. բայց ես մոռացել էի, որ
նրա արևը խաւարել է: Երէկ թաղեցինք... Քա-
նի արշին է պէտք:

բան ովասիլցամ շայդ ուրչ ամ պարզաբն ոչ
ուրած ձարա ոն ովասի ու սիլցը ...միջմայս ըմեն
: բառակայի մայսամ խոցանման մայսամ
ա շամա ովասի ուրչ չի ու աշքը յմմ—

ՊԱՐՈՂ ԳԱՆԳԲ

Ես գիտեմ, ով տեմի իմ այս նոր պատ-
մուածքը (ի հարկէ իմ ծանօթներից), պիտի
բացագանչի. «Ա՞ի, էլի գանդ. դա ինչ գանգա-
մոլութիւն է»:

Բայց հաւատացնում եմ, որ սա իմ ֆան-
տազեան չէ. Այս պատմութիւնը ինձ արեց իմ
ծանօթ ծերունի բժիշկ Գ. Ենանը: Այնպէս որ սա
իրական կեանքից է, և կարող էք հանդիստ սըր-
տով կարգալ:

* * *

Բժշկական ֆակուլտետի 1 կուրսի ուսանող
էի, — այսպէս սկսեց ծերունի բժիշկը: — Այն
գանգը, որի մասին պիտի պատմեմ, պատկա-
նում էր բժշկութեան ուսանող լ. Ենանին, որը
ապրում էր այդ սենեակում: Նա իմ հայրենա-
կիցն էր. ինքը աւարտեց գնաց ու գանգը թո-
ղեց ինձ: Նա դրված էր գրքակալի վերի մա-
սում, փոշոտած, ատամներից միայն երկուսն
էին մնում:

Այդ գանգը նման չէր մինչև այժմ տեսած
իմ գանգերին, ինչոր մի ձգող բան կար նրա-

նում. չը գիտեմ, սովորել էի ինչ նա այնպէս
սարսափելի չէր, ինչպէս սովորաբար լինում են:
Երբեմն, երբ մենակ էի մնում, ինձ թուում
էր, թէ նա ժպտում է և ահա կը սկսի խօսել
հետո:

Հինգ ամիս էր անցել, ինչ լ. Ենանը գնա-
ցել էր. այդ հինգ ամսվայ ընթացքում ոչ մի
անգամ նրա վրայից փոշին չէր մաքրված: Աղա-
խինը վախենում էր՝ չը գիտեմ թէ զգուում,
իսկ ես ծուլանում էի. և այդպէս ամիսներով
փոշին նստում էր վրան:

Սենեակ մանելուց առաջ, առաջին բանը,
որ աչքիս էր ընկնում, գանգն էր, բայց կամաց-
կամաց սովորեցի և մինչև անգամ չէի էլ նկա-
տում: կարծես նա չը կար էլ սենեակում:

Մի անգամ, լաւ յիշում եմ ծննդեան տօ-
ներն էին, մի ընկերոջս մօտ հաւաքվել էինք.
դէհ, վիճել այն ժամանակ շատ էինք սիրում,
այնպէս որ կոկորդներս ցաւելու շափ գուգո-
ռացել էինք և ոչնչացրել հայրենիքից ստացված
միրգը:

Արգէն ժամը 11-ից անց էր, որ դուրս ե-
կանք նրա մօտից: Հասայ տուն, բացի սենեա-
կիս գուգը, առանց հանվելու վառեցի լուցկին՝
որ վառեմ լամպը՝ յանկարծ լսեցի, որ մի բան
ամուր ընկաւ յատակի վրայ և գլուրփում է. ես
մի քիչ վախեցայ: Լուցկին մարեց, ես վառեցի

մի ուրիշը և սարսափած նկատեցի, որ դանդնէ Հնկել է և շարունակում է այս ու այն կողմն ընկնել:

Ես արագ դուրս եկայ սենեակից և փակեցի դուռը:

Մի քանի վայրկեան ես կանդնած էի դռան ետեր և չէի կարողանում ուշքի դալ. դռան յետից լսվում էր, թէ ինչպէս նա դեռ թաւալվում էր:

Ես նախապաշարված մարդ չեմ և չէի, բայց պէտք է խոստովանվեմ, որ սարսափելի տպաւրութիւն թողեց:

Ի՞նչպէս բացատրել, չէ որ աչքովս տեսայ...

Յանկարծ ես յիշեցի, որ այդ դանդը նման չէր միւս դանդերին, որ նա ինչ-որ շատ սիրամբ տեսք ունէր:

Քանի գնում՝ ես աւելի և աւել էի վախենում:

Դուան երկաթը ձեռքիս բռնած՝ ես կանդնել էի և չը գիտէի ինչ անել:

Նայեցի շուրջս և տեսայ, որ հարեամներս, որ իրաւաբանական ֆակուլտէտի երկու ուսանողներ էին, դեռ քնած չէին. նրանց սենեակից լսվում էր խօսակցութեան ձայն:

Ես վազեցի գէպի նրանց սենեակը և առանց դուռը բաղիսելու ներս ընկայ:

Երեք հոգի էին: Երեքն էլ, տեսնելով ինձ այլայլված, գունատ, վախեցած, ոտի ելան: Ի՞նչ է պատահել, ինչու ես այդպէս գունատ:

—Ոչինչ... ճշմարիտ, ծիծաղելի է, —մի քիչ ուշքի գալով ասացի ես: —Բայց ես վախեցայ... այո...

—Բայց ինչու... ինչից... Ես նրանց պատմեցի բոլորը: Նրանք թէն ծիծաղեցին, բայց, նկատելով իմ վախը և մածելով, որ երկի գյուղել եմ, լրջացան:

—Ի՞նչ յիմար բաներ ես ասում. ընկել է, ի հարկէ, կը գլորվի:

—Այո, —ասացի ես, և մօտեցայ ջրի շիշին ու մի բաժակ ջուր խմեցի. —պարոններ, դուք ծիծաղում էք, բայց հաւատացնում եմ, որ ծիծաղելի չէ. այնպէս է թաւալվում, կարծես մէկը դիտմամբ զլորում է:

—Յարութիւն է աւել, —ծիծաղելով ասաց մէկը:

—Դէհ, չորսով գնանք, տեսնենք այդ պարող դանդը, որից այդպէս վախեցել ես:

—Ավտունա դադարած կը լինի պարելուց: Ես ոչինչ չը կարողացայ ասել, թէն իսկապէս ամաչում էի այդ երեխայական վախի պատճառով:

—Լամպը վառված է:

— Ոչ, ես նոր առւն եկայի:
 Մէկը վերցրեց լամպը և բոլորս դիմեցինք
 դէպի իմ սենեակը:
 — Սպասեցէք, տեսնենք, էլի պարում է թէ
 չէ, — ասաց մէկը և ականջը դրեց դռանը:
 — Դադարել է պարելուց, երկի, յոգնել է:
 — Թողէք, ի սէրն Աստուծոյ, ի՞նչ էք երե-
 խայութիւններ անում. մտէք տեսնենք ի՞նչ բան
 է. չէք տեսնում, ինչպէս է վախեցել, — ասաց
 ընկերներիցս մէկը ու ծիծառելով բացեց դռւուը:
 — Բայց, պարոններ, հաւատացնում եմ...
 — Դէհ, լաւ, լաւ:

Ներս մտանք: Գանգը անշարժ ընկած էր
 սենեակի մէջտեղում, բայց մէր մտնելուց ան-
 միջապէս սկսեց շարժւել: Բոլորս էլ լուռ էինք,
 բոլորի դէմքին էլ վախ էր նկատում:
 Գանգը քանի գնում աւելի և աւելի արագ
 էր շարժւում. նա սկսեց այս ու այն կողմը ընկ-
 նել:

Մենք, սարսափած, լուռ նայում էինք, և
 ոչ ոք ոչինչ չէր գտնում ասելու. մի տեսակ
 ապուշ դրութեան մէջ էինք:

Գանգը աւելի և աւելի արագ էր թաւալ-
 ում... Ես քիչ էր մնում ճայի. բոլորս յետ-յետ,
 դէպի դուռն էինք գնում, երբ յանկարծ գանգը
 կանգ առաւ, կարծես մէկը մեխեց տեղում:

— Մուկ... մուկ... մուկ..., — կանչեցինք
 ամենքս:

Մենք դեռ ուշքի չէինք գալիս, իսկ մուկը
 վախեցած այս ու այն կողմ էր ընկնում, խրփ-
 ուում էր պատից պատ, բարձրանում էր պատի
 վրա ու էլի ցած ընկնում ու վազվզում:

Մի վայրկեան անց՝ երբ բոլորս հասկացել
 էինք, թէ բանը ինչումն է, «մուկ... մուկ...
 կանչելով ընկանք նրա ետեից:

Շատ վազվզեցինք՝ տղաներից մէկը կրկնա-
 կօշիկով խփեց և սպանեց այդ խեղճ կենդանուն:

ԶԻՄՈՒԹԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

—Հագնվել, —հրամայեց գնդապետը:

Հագնվել, հագնվել, —կարծես էլեքտրական թելով անցաւ և լսվեց գնդի բոլոր ծայրերում:

Բոլորը իրար խառնվեցին, աղմուկ, իրար-անցում: Վրանները մի քանի բօպէում հաւաք-ւեցին, բոլորս հագնված պատրաստ էինք: Բոլո-րի դէմքին երկում էր մի թեթև ժպիտ:

Զօրախսաղերը վերջացան. դէպի զօրանոց-ները. մի փոքր հանգիստ: Երկար ժամանակ բացօղեայ վրանների տակ ապրելով՝ մենք կա-րօռել էինք ձմեռվայ բնակարանները:

Ամեն մէկն ունէր իր ծրագիրը. ոմանք մտագիր էին արձակուրդ խնդրել, իսկ մենք, 18... թւականի զինուորներս, վերջացնում էինք ծառայութիւններս և հեռանում էինք մօտիկ ա-պագայում:

Այդ ծանրութեան, այդ երկար ճանապարհի նեղութիւնները ոչնչանում էին այդ յոյսի առաջ:

Բէշտառւն կորած էր ամպերի մէջ. անձրեւ մեծ կաթիլներով կաթկթում էր: Երաժշտութիւ-նը թնդաց, մենք շարժվեցինք: Իջնում էինք

դէպի քաղաք: Անձրեւ կաթիլները քանի գնում փոքրանում ու խտանում էին: Մենք իջնում էինք, ուշադրութիւն չը դարձնելով անձրեւ վրա, որը սկսել էր հեղեղի պէս թափվել. շարքերը խառնվել էին. Երաժշտութիւնը դադարել: Զգա-լի էր, թէ ինչպէս պաղ կաթիլները գլորվում էին մարմնի վրայով և ամեն անգամ էլեքտրա-կան ցնցում առաջ բերում: Սայթաքելով մենք իջնում էինք:

—Արև... արև...—լսվեցին յանկարծ ամեն կողմից ուրախ աղաղակներ:

Անձրեւ կամաց-կամաց դադարեց: Բոլորի դէմքին դարձեալ երեաց ուրախ ժպիտ. նորից սկսվեցին երգերը, կատակները: Կարծես ոչինչ չէր կարող—ոչ կարկուտ, ոչ փոթորիկ—խանգա-րել մեզ ուրախ լինել:

Մենք սովորել էինք գիշերել անձրենների տակ:

Հոհուալով, մինչև սրունքներս ջրի մէջ, անցնում էինք քաղաքի միջով: Փողոցներից գե-տերի նման անձրևաջեր էին վազում, պատու-հաններից երկում էին զլուխներ, որոնք խղճա-հարութեամբ նայում էին մեզ:

Բէշտառի ստորոտում արեւ աւելի վստահ երեաց ամպերի տակից. լսվեց զինուորների ու-րախ երգը, Բէշտառն կրկնեց և թաղեց եր կրծքում: Այստեղ մենք կանգ առանք հանգստա-

Նալու։ Այստեղից մեր ճանապարհը ընկած էր անտառի միջով։

Բարձրաւանդակը, որտեղ մի ժամ առաջ կեանքը եռում էր, լուս սախտակին տալիս մեր վրանները, այժմ կարծես տիրել է, որ ամայի թողինք։

Թմբուկները զարկեցին։ Մենք կանգնած էինք շարքերում՝ երաժշտութիւնը նուագեց անտառը թնդում էր. մեր երգի արձագանքը հալվում, անհետանում էր լեռների մէջ։

Լուսինը հաւասար լուսաւորում էր մեր ճանապարհը։ Հեռուից երեսում էր կայսրանը։ Ճրագները, աղօտ փայլվում էին, Դեռ հինգ-վեց վերատ կար մինչև հանքային ջրեր հասնելը։

Մեր շորերը դեռ բոլորովին չէին չորացել։ Յոզնած, ջարդված էինք, բոլորս բայց էլլի առաջ էինք գնում։ Ցուրտը թափանցում էր մինչև ոբկորների ներսը։ Մենք գնում էինք, բայց ճրագները կարծես փախչում էին մեզանից։

Հանքային ջրերում մեզ տեղաւորեցին ապրանքատար վագօններում, որոնք կանգնած էին վերջին գծի վրա։

Ապրանքակիր վագօնները, որոնք յարմարեցված էին, մեզ ճամար, ալանում էին երկաթի ճանապարհով։ Աղմուկը, երգեցը խլացնում էին

անիւների ձայնը։ Մի քանիսը, որոնք չէին կըշտացել քնից, տախտակների վրայ քնած էին. այդ աղմուկը չէր վրդովում նրանց, հանդիսատը։

Վագօնի յատակը ծածկված էր արեածագկի կճեաներով, անկիւններում, այս ու այն կողմ թափթփած էին ձմերուկի կեղեներ... Մի քանիսը, խմբված՝ տախտակներից մեկի վրայ, ոգեորեած խօսում էին. այդ նրանք են, որոնք շուտով տուն պիտի գնան, հայրենիք, ծնողների գիրկը։ Ճայռը մեջ առ զայտուա պահած ու ձեւ ան։

Դկացը յանկարծ ցնցկեց և կանգ պրաւերգ, խօսակցութիւն, աղմուկ միանգամից դադարեցին, Բոլորը ուղի կանգնեցին։

— Ի՞նչ պատահեց։ առ յի հարցո մի ունակ Խմբվեցին դռների մօտ, մի քանիսը քարձրացան մերի տախտակների վրայ։ պատուհանից նայելու, բժիշկը արագ անցաւ, Ֆեղակը ները օֆիցիրները արագ ումում էին մի քանի վագօն հեռու խմբված մարդկանց մօտ։

— Ոչ ոք չի չնի վագօնից։ կանչըւմ, էր հերթապահ օֆիցիրը։

— Մէկը ընկել է անիւների տակ։

Կայծակի արագութեամբ, տարածվեց այդ ցուրը բոլոր վագօններում. բայց մու է, մերած է թէ վիրաւոր, ինչպէս է պատահել. այդ ոչ ոք մեզանից չը գիտէ։

*** ամէջ զբոյ ըստան վ Ս ուրեմն ի մաւ ի մաւ
ճամագ լույս առ առաջաւան ու մաս լիսաւ

Մի շաբաթ էր անցել, կայարանը լիքն էր
զինւրներով: Տուն էինք գնում: Մենք արդէն
տեղաւորվել էինք վագօններում: Երկրորդ զանգը
խփել էր:

Մայթի վրայ կանգնած մեղ են նայում:
Բոլորի դէմքին էլ թախիծ կայ. մնացողներն են,
եկել են բարի ճանապարհ ասելու. մարդիկ, ո-
րոնց հետ երկար ապրել ենք մի յարկի տակ,
որոնց հազիւ թէ միւս անգամ պատահենք:

Լսվեց երրորդ զանգը:

Երաժշտութիւնը նուագեց. շոգեկառքը ցնց-
վեց, մի անգամ էլ սուլեց և առաջ սլացաւ:

Մի քանի վայրկեան դեռ լսվում էին երա-
ժշտութեան, մնացողների ձայները, բայց շու-
տով բոլորին յաջորդեց անիւների դղրդոցը:

Մի քանի վայրկեան բոլորս լուռ մեխված
էինք տեղներումս:

— Տղերք, տուն ենք գնում, — գոռաց մէկը
ընդհատելով այդ լուռթիւնը:

Շոգեկառքը սլանում էր:

Տուն ենք գնում. որքան ենք ցնորվել, ինչ
անհամբերութեամբ սպասում էինք այդ օրվան...
Ես յիշեցի, որ չորս տարի առաջ նոյն այս տե-
սակ վագօններով մեղ տանում էին ծառայելու.
այն ժամանակ քառասուն հոգի էինք...

Ես ակամայ սկսեցի համըել:

Բայց մէր են վեցը, ինչ եղան: Երկուսը մե-
ռան հէնց առաջին տարին, երկուսը հիւանդու-
թեան պատճառով տուն գնացին, մէկը կարգա-
պահական բատալիոն... Բայց մէր է մէկը: Ինչ-
քան բան է փոխվել այս չորս տարում:

— Տղերք, մենք պէտք է 33 լինենք, մէկը
չը կայ:

— Լաւ հաշւիր, կը գտնես:

— Գէօին մոռացել ես, հիւանդանոցումն է:
— Գէօին, այո, այո: Զօրախաղերից վերա-
դառնալուց ջախջախեց ոտը անիւների տակ. նա
այժմ պառկած է կ.-ի հիւանդանոցում:

Կ... կայարանում մենք պէտք է մնայինք,
ես վճռեցի, եթէ գնացքը գոնէ մի ժամ մնայ,
գնալ հիւանդանոց և նրան տեսնել:

Կ... կայարանում գնացքը երկու ժամ պի-
տի մնար: Ես և ընկերս թէյ, շաքար, ծխախոտ
և մի քանի ուրիշ բաներ վերցնելով դիմեցինք
դէպի հիւանդանոց:

Երբ մենք մօտեցանք նրան, նա մի վայր-
կեան լուռ նայեց մեղ և յանկարծ ճչաց.

— Տուն էք գնում:

Խօսքերը սառեցին նրա շրթունքների վրա:
Արցունքները խեղղեցին նրան:

Մենք լուռ կանգնած էինք մահճակալի
մօտ:

—Տեսն էք գնում, —մի քիչ հանգստացած
կրկնեց նա և կախ զցեց դլուխը:
—Ոչինչ, մի մտածիր, դու էլ շուտով կը
լաւանաս, կը գառ:
Ես ոչինչ չեի գտնում անելու:

—Արդէն լաւացել եմ, —հեգնական ժայխտով
ասաց նա, մի կողմ ձգելով բարակ վերմակը. —
կտրել են... փչացայ, էլ ինչի՞ եմ պէտք... ե-
րանի չորս տարի էլ ծառայէի, միայն ոտս ողջ
լինէր. ինչի՞ ինչի՞ եմ պէտք այժմ... Խեղճ
մայրս... հիմա անհամբեր սպասում է... Ասա-
ցէք, սր շուտով կը գամ, լաց չը լինի, սաղ-սա-
լամաթ եմ... փայտի ոտով եմ, դրա համար եմ
դոշացել...

Նա չը կարողացաւ շարունակել և սկսեց
հեկեկալով լալ:

Ծանր տպաւորութեան տակ մենք դուրս ե-
կանք հիւանդանոցից: 10 րօպէ էր մնում գնաց-
քի շարժվելուն, երբ հասանք կայարան: Բոլորը
արդէն տեղաւորվել էին. վագօններում լսվում
էր երդ, ծիծաղ...

ԹԱՂՐԱՄՈՒՆ

Բժիշկ Բ.-ի ընդունարանում նստած էին 8
հոգի: Բոլորն էլ անհամբեր իրանց հերթին էին
սպասում: Բոլորն էլ աշխատում էին մի բանով
զբաղվել, որ ժամանակը աննկատելի անցնի:
Մէկը ինչոր շաբաթաթերթի միջի նկարներն
էր նայում, մի ուրիշը՝ պատի նկարները: Երկու
հոգի էլ նստած միմեանց մօտ իրանց հիւանդու-
թիւնից էին խօսում: Ամեն մէկը աշխատում էր
մի բանով զբաղվել:

Եթէ բոլորն էլ այդպէս զբաղված չը լինէ-
ին իրանցով, երևի բոլոր ուշադրութիւնները կը
կենտրօնանային պատի տակ նստած պարոնի վրա,
որ ներս մտաւ առանց ոչ ոքի նայելու, մօտե-
ցաւ անկիւնում դրված աթոռին, մօտի սեղանի
վրայից մի գիրք վերցրեց, նստեց, բացեց գիրքը
և մնաց անշարժ:

Դա մօտ 40 տարեկան մարդ էր կամ գուցէ
աւելի երիտասարդ, բայց ժամանակից աւելի վաղ
ծերացած:

Նա շարունակ նայում էր ձեռքին բռնած
գրքին, բայց չէր կարդում, որովհետև քառորդ

ժամից աւելի էր, որ նա նոյն երեսին, նոյն տոռ-
դին և գուշէ նոյն տառին էր նայում:

Երբեմն նա նեարդային կերպով շարժում էր
իր ձեռքը, կարծես ձանձրացնող ճանճերը քշելու
համար: Աչքերի մէջ ձանձրոյթ թէ յոդնածու-
թիւն կար: Չը թունքների աջ անկիւնը միշտ վեր
քաշած, նա երբեմն ինչոր անորոշ ձայներ էր հա-
նում և լուռմ:

Երբ հերթը նրան հասաւ, նա արագ, նեար-
դային կերպով բարձրացաւ, բայց չը շտապեց,
մինչև բժիշկը երկրորդ անգամ չը կրկնեց՝ «հե-
տևեալը»:

* *

Բժիշկը երբ դիմեց նրան սովորական հար-
ցով, թէ «ինչով կարող եմ օգտակար լինել», նա
մի վայրկեան լուռ էր, կարծես ուզում էր ձայն
հանել, մի բան ասել, բայց կարծես մոռացել էր
խօսել, անկարող էր ձայն հանել. մի անորոշ
ձայն հանեց, որը աւելի խոզի, քան մարդու ձայ-
նի էր նման:

Բժիշկը հրաւիրեց նրան նստել. ինքն էլ նըս-
տեց և լուռ սպասում էր:

— Զըգիտեմ... չը գիտեմ ինչ ասեմ, — նե-
արդային կերպով մի քանի անգամ կրկնեց նա
և էլի լուց: — Ես հիւանդ չեմ, — շարունակեց նա,
— ոչ մի տեղս չի ցաւում...:

Երկի լաւ... չէք քնում, — ընդհատեց
բժիշկը:

— Զեզ ո՞վ ասաց, — վախեցած հարցրեց
նա:

— Այդ դժուար չէ գուշակել: Պատմեցէք
մանրամամն. Ես ձեզ լսում եմ:

— Ես առողջ եմ, բոլորովին առողջ, լաւ
ուտում եմ, խմում... բայց ես չեմ քնել... մի
ամսից աւելի է, որ ես չեմ քնել... հասկանում
էք բոլորովին... մի ամսից աւելի է, որ ես պառ-
կում եմ և վեր կենում առանց քնելու: Ինց թւում
է, թէ քունս տանում է, պառկում եմ, և քանի
շատ եմ աշխատում քնել, այնքան աւելի հեռու
է իմ քունը փախչում աչքերից, և ամբողջ գի-
շերները ես լուսացնում եմ բաց աչքերով, եր-
բեմն ինձ աջողվում է և ինձ թւում է, որ ահա
կը քնեմ, վերջապէս կը քնեմ... Սիրտս սկսում
է աւելի կանօնաւոր բարախել, ուղեղս դադարում
է այնպէս փոթորկվել գանգիս մէջ և մի մտքից
միւսը ցատկել ուրախութիւնից քիչ է մնում
ճշամ: Այդ ըօպէներին՝ խկապէս չը գիտեմ,
քնած եմ թէ արթուն... Հազիւ մի քանի ըօպէ
մնում եմ այդ դրութեան մէջ և անհամբեր սպա-
սում եմ, որ ահա կընկնեմ ինքնամոռացութեան
մէջ, երբ գալիս է նա... նա...

Դողալով, նա կիսով չափ բարձրացաւ տե-
ղից:

— Նա, այդ ճիւաղը, այդ հրէշը, որ հազար ահգամ աւելի վատ է՝ քան անքնութիւնը... Ես պատրաստ եմ երբէք, երբէք չը քնել, միմիայն չը լսեմ նրա ձայնը, նրա սոսկալի ձայնը... Նա գալիս է, ծափերով նստում է զլխավերևս և պատմում... պատմում է... և ստիպում է ինձ լսել իրան...

— Ո՞վ, — ընդհատեց բժիշկը:

— Զը գիտեմ, ես նրա դէմքը չեմ տեսնում... Ես միայն նրա ձայնն եմ լսում, նրա նուրբ, քաղցր, մելօդիկ ձայնը... որ շարունակ ձախարակի պէս՝ միալար պատմում է... Ի՞նչ չը գիտեմ: Ես նրան չեմ հասկանում... ժամերով նստում է և պատմում... Պատմում է և ինձ ստիպում է լսել: Յուսահատված՝ ես վիշում եմ, ես ուզում լսել, փակում եմ ականջներս. բայց նա պատմում է... պատմում է անվերջ, յամառ կերպով: Ես վեր եմ ցատկում տեղիցս, յուսահատված մկում եմ պատիցպատ խփվել... Նա էլ դանդաղ վեր է կենում և կամաց կամաց պատմելով անհետանում... Նրան չը լսելու համար ես վախենում եմ անկողին մանել... Չորս օր է՝ չեմ պառկել... Բժիշկ... Բժիշկ, ես կը խելագարվեմ: Փրկեցէք ինձ... Փրկեցէք... Ես այլևս չեմ կարող տանել այս տանջանքները... ազատեցէք:

Նա յուսահատ բռնեց ձեռքով գլուխը և սեղմեց, որքան ոյժ ունէր:

Մի րօպէ հիւանդն էլ, բժիշկն էլ լուռ էին:

— Ի՞նչո՞ւ այսքան ժամանակ բժշկի չէք դիմել:

— Դիմել եմ:

— Կարսղ էք բերել նրա տուած գեղատումսերը:

Նա գրապանից հանեց մի կոյտ ճիւլտիված գեղատումսեր և թափեց բժշկի տուած:

— Զեն օգնում... Բոլորը փորձել եմ: Մի անգամ քիչ մնաց... Բայց փրկեցին... Ի չարն էի գործ դրել դեղը:

Բժիշկը մի քանի րօպէ նայում էր գեղատումսերին...

— Զեզ հանգիստ է պէտք... Զեր նեարդերը շատ են թուլացած, ձեզ պէտք է հանգիստ կեանք, սնունդ, ճանապարհորդութիւններ, լսւ, ուրախ ընկերների շրջան... Իսկ այդ բոլորի վրա աւելացրէք. գուցէ ձեզ տարօրինակ կը թւայ, բայց ես իմ հիւանդներից շատերին խորհուրդ եմ տալիս յաճախել ցիրկ... Այնտեղ մի ծաղրածու կայ, որը ստիպում է մարդկանց սրտանց ծիծաղել... առողջ ծիծաղով... Իմ հիւանդներն էլ վկայում են, թէ ինչ լսւ ազդեցութիւն է անում նրանց վրա այդ ծիծաղը... Ես ինքս էլ մեծ հաճոյք եմ

ստանում նրան լսելով և շաբաթը Յ անդամ գը-
նում եմ յատկապէս նրան լսելու: Վերին աստի-
ճանի սրամիտ և խելօք մարդ է: Հազիւ են պա-
տահում այդպիսի ծաղրածուներ, որոնք իսկա-
պէս ստիպեն անկեղծ կերպով ծիծաղել: Գուցէ
պատահմամբ եղել էք և տեսել այդ ծաղրածուին:

Մի դառն ժալիս խաղաց նրա դէմքի վրա...
— Դուք փորձեցէք...

Նա լուռ վեր կացաւ, դրեց փողը սեղանի
վրա: Նրա դէմքը աւելի մուայլվեց... Նա լուռ
դէմեց դէսի դուռը...

— Սպասեցէք:

Նա արդէն կամենում էր բանալ դուռը, բաց
թողեց ձեռքը և լուռ յետ նայեց: Մի վայրկեան
նայեց բժշկին և շշնջաց.

— Այդ ծաղրածուն ես եմ:

ամ անձի՞ն ձեռքում ու գլուխման անհայտ զիազ
մանուկունի անձի բարս գոր սպառ բնակ
ամուսնու անձի անձի անձի անձի անձի անձի

ԿԵՍՆՔԻ ԾԱՂՐԸ

Այսօր նա դասախոսութեան էլ չէր կարո-
ղացել գնալ. ամբողջ օրը այս ու այն կողմն էր
ընկել, շատ բանի ձեռնարկել, բայց ոչ մի բանի
վրա չէր կարողացել կենտրօնանալ: Երրորդ օրն
է, որ նա այդ գրութեան մէջ է. երրորդ օրն է,
որ չէ ճաշել. թէյի հետ հաց-պանիր՝ ահա նրա
մնունդը. այսօր այդ էլ վերջացել էր. միայն մի
քանի կտոր շաքար է մնացել: Ամենից շատ նրան
նեղացնում էր ծխախոտի վերջանալը: Նա վեր
կացաւ մահճակալի վրայից, մի քանի անդամ ան-
ցաւ սենեակի երկարութեամբ, նայեց այս ու
կողմ, վնասեց սեղանի տակը, բոլոր անկիւն-
ները, յուսալով, որ ծխախոտի աւելցուկներ կը
գտնի, բայց ի գուրք. Նա առաջ էլ շատ էր փըն-
տուել, գտել էր մահճակալի տակ մի կիսատ ծխա-
խոտ և ծխել: Նա նորից ընկաւ մահճակալի
վրա:

— Ի՞նչ են մտածում, որ այսքան ուշաց-
նում են:

Արդէն ժամը երեքից անց էր, քաղցը նրան
սաստիկ նեղում էր... ինչ անել... Ընկերներից
շատ էր վերցրել. այլևս ամաչում էր...
Նա վեր կացաւ, փորձեց կարդալ, ոչինչ չօգնեց.

զլուխը կարծես ծանրացել էր արճիմի նման։ Նա վճռեց գուրս գալ, արագ հաղաւ վերարկուն, վերցրեց զլխարկը։ «Գոնէ տանտիրուհուն կը խարեմ»—մտածեց նա, նա միշտ, երբ ճաշի փող չէր ունենում, ճաշի ժամանակ գուրս էր փնում փողոց, մի կէս ժամի չափ այս ու այն կողմ ընկնում և վերադառնում ատամները մաքրելով՝ իրը թէ ճաշից է վերադառնում։

Նա գուրս եկաւ փողոց, ինքն էլ չը գիտէր ուր դնալ... Հրաշալի օր էր, արեւ փայլում էր. մի ողորմելի ջերմութեամբ արեսի ճառագայթները՝ զգալով իրանց անկարողութիւնը հալեցնելու այդ կարծը սառոյցը, ձիւնը՝ խաղում էին ձիւնի հետ։ Նա անցաւ Տիկրակօյ բուլվարի երկարութեամբ, յետ գառաւ ու անգիտակցարար նստեց աթոռներից մէկի վրա։ Ի՞նչ անել, ո՞րտեղից փող գտնել. փորի պահանջը անողոք է։ Նա նստած տեղը այս ու այն կողմն էր՝ դառնում, կասես փշերի վրա լինէր նստած...։ Այս, մի ծխախոտ։ Նա քիչ էր մնում մօտենալ անցորդներից մէկին՝ ծխախոտ խնդրելու, բայց այդ չափազանց թւաց. վեր կենալ գնալ տուն պառկելքնել, բայց լաւ գիտէր, որ գատարկ ստամոքսով քնել չէր կարողանալու... «Ի՞նչ լաւ է հիմա հայրենիքում, — անցաւ նրա մտքովը, -- եթէ հիմա մայրս ինձ տեսնէր այսպէս քաղցած»... Երկրորդ տարին է, որ նա ուսանող է, բայց այսպիսի կրիտիքական դրութեան մէջ երբէք չէր եղել։

«Թու, սա ի՞նչ կեանք է... նգովված լինի այս տեսակ կեանքն էլ, ուսումն էլ»—մտածում էր նա, զլուխը խոնարհած, ու ձեռքի փայտով մեքենայաբար 8-եր էր գրում...»

... Երագ թւաց։ Սա ի՞նչ դիպված է։ Կասես երկնքից ընկաւ. Նրանից մի քիչ հեռու, կլաով չափ ձիւնի մէջ թաղված-ընկած էր մի բուրլանցոց։ Նայեց շուրջը, արագ կռացաւ, վերցրեց և առանց նալելու գրեց գրպանն ու արագ, կարծես հետևելիս լինէին, վազեց տուն, մտաւ սենեակը... Սիրաը բաբախում էր. հանեց գրպանից, կարծես չը հաւատալով, որ դա իրականութիւն լինէր։ Այս, մի ամբողջ բուրլի... Նա մի վայրկեան կարծես մոռացաւ քաղցը։

«Ի՞նչու տուն եկայ»—մտածեց նա ու արագ գուրս վագեց։ Մօտեցաւ ճաշարանի դռանը ու կանդ առաւ։

«Ոչ, աւելի լաւ է՝ մի քանի բան կառնեմ և տուն կը տանեմ. կը պատուիրեմ ինքնաեռը և մի լաւ կուտեմ, կը խմեմ»։ Առանց երկար տատանվելու, արագ քայլերով նա դիմեց գիմացի խանութը։

Ի՞նչ էք կամննում, — զիմեց նրան գործակատարը։

— Մի փունտ շաքար, 10 կ. թէյ։

— Ուրիշ, — կը ուղարկով հարցրեց գործակատարը։

— Երկու տուփ ծխախոտ։ Հուցկի էլ տուէք...:
Կէս ֆունտ կալբաս, կէս ֆունտ էլ պանիր։

— Ուրիշ ոչինչ։

— Ոչինչ։

Նա ամենից առաջ բացեց ծխախոտի մի տուփը և աղահութեամբ սկսեց ծխել, մինչեւ գործակատարը կը կապէր գնած իրերը։

— Համեցէք

— Ի՞չքան է։

— 64 կոպէկ։

— Վերցրէք։

Նա տուեց փողը և սպասում էր մանրը ստանալու քուլա-քուլա թողնելով ծխախոտի ծուխը... Նա կապոցը ձեռքին կանգնած էր։ Հըրճանքից, որ մի քանի րօպէ ացն նա աղահութեամբ խժուելու է այդ բոլորը, ուրախութիւնից քիչ էր մնում համբուրի խանութպանին էլ, գործակատարին էլ, մօտը կանգնած հաստ, հարբած դէմքով կնոջն էլ...։

Յանկարծ նրան թւաց, թէ խանութպանը հասկացաւ, որ այդ փողը իրանը չէ, որ դա այն փողն է, որը ընկած էր Տվերսկօյ բուլվարում և որը նա գտել է...։

Խանութպանը երկար նայեց փողին, մի քանի անգամ խփեց սեղանին, նայեց տղային...։

— Սա կեղծ է, — ասաց նա, մեկնելով փողը դէպի տղան, որը կանգնած էր ապուշ, բերանը

կիսաբաց և չէր հասկանում, թէ ինչ են ասում։

— կեղծ է, — կրկնեց խանութպանը։

— կեղծ է..., — թոթովեց տղան, կարծես

չը հասկանալով խօսքի իմաստը։

— Այո, կեղծ է։

— Ի՞նչպէս թէ...։

Նրան թւաց, թէ աչքերը սեանում են և ահա կընկնի...։

կեղծ է... կեղծ է...։

Ցիշնւմ էք ով է տուել։

— Այո, այո...։

Ուրախացած, որ մի հնար գտնվեց գուրսգալու այդ դրութիւնից, կակազեց։

— Ես իսկոյն կը տանեմ... կը փոխեմ...։

թողէք սրանք մնան, ես իսկոյն կը բերեմ, — ասաց նա, վերցրեց փողը, դրեց սեղանի վրա կապոցը, ուզեց դուրս գնալ։

— Ծխախոտը կը մնայ ձեզ վրա։

— Ախ, այո, այս մէկը առէք, իսկ միւսը բացել եմ, ներեցէք, ես ուրիշ փող չունեմ մօտս, իսկոյն կը բերեմ։

— Ոչինչ, ոչինչ, վերցրէք, մենք ձեզ հաւատում ենք։

— Ինձ նոր տուին, ես իսկոյն կը տանեմ, կը փոխեմ... ինչ անամօթութիւնէ...։

— Ոչինչ, ոչինչ...։

ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երկրորդ գործողութիւնը վերջացաւ:
 Ելեքտրական լուսաւորութիւնը վառւեց, լուսաւորելով դահլիճը:
 Թատրօնի երեք քառորդը գատարկէր: Առաջն գործողութիւնից յետոյ բոլորը առաջ էին քաշվել, ետևի կարգերը թողնելով դատարկ:
 Տխուր էր. բոլորի դէմքին էլ ձանձրոյթ էր նկատվում, յոգնածութիւն:

Վարագոյը ընկաւ, բոլորն էլ դանդաղ բարձրացան և դիմեցին Փօյէն: Դահլիճում մնացին ալեխառն մազերով մի պարոն իր՝ մօտ 16 տարեկան աղջկայ հետ՝ և չորս հոգի երկրորդ յարկի օթեակում:

— Ի՞նչ ձանձրալի է, — դարձաւ աղջիկը հօրը...

Հայրը դիմով համաձայնութեան նշան արեց:
 — Գնանք Փօյէ, — դիմեց աղջիկը, մի քիչ լուսութիւնից յետոյ:
 — Գնանք:

Նրանք վեր կացան և դիմեցին Փօյէն, որտեղ հատ ու կէնտ մարդիկ թոյլ-թոյլ այս ու

այն կողմ նայելով, լուռ անց ու դարձ էին անում:

Երկու կարճահասակ օրիորդներ՝ մէկը սև, խիտ մազերով, մէծ ու դուրս պրծած աչքերով, միւսը լղար, քառանկիւնի դէմքով, յօնքերը վերքաշած, կարծես օգտվելով մարդկանց քչութիւնից՝ բարձր ծիծաղելով արագ անց ու դարձ էին անում, սրան նրան խօսքեր ասում, մի խօսքով սրանք էլ ձանձրանում էին և չը գիտէին ինչ անել:

Հայր ու աղջիկ մի անգամ անցան Փօյէի երկարութեամբ. այստեղ էլ տիսուր էր:

Միայն այն երկու աղջիկները կարծես ուրախ էին, իրանց լաւ զգում: Նրանցից մէկը յանկարծ լայն բացեց աչքերը, մի վայրկեան լուռ նայեց, արագ բաժանվեց ընկերուհուց, մօտեցաւ հօրը և աղջկան, որոնք լուռ անցնում էին, նայեց աղջկայ դէմքին, փրթկաց ու վազեց ընկերուհու մօտ:

— Դու նկատեցի՞ր:

— Ի՞նչ:

— Զը տեսաք կեղծ խալը, — շնչաց նա ընկերուհուն և բարձրածայն ծիծաղեց:

— Ճիշդ..., — ասաց միւսը՝ հետացը բութեամբ դէս ու դէն նայելով:

— Անկեղծ, ուզում ես՝ ինքդ նայիր, տես, գալիս են:

— Սպասիր, ես կը մօտենամ:

Լուրջ դէմք շինելով, առանց շտալելու, օրորվելով, նա մօտեցաւ հօրը և աղջկանը, երբ հաւասարվեց նրանց, մի անգամից բարձրացրեց գլուխը, նայեց ուղիղ աղջկայ դէմքին ու ժրպտալով յետ դարձաւ ընկերունու մօտ, որը պատի տակ ժպտալով սպասում էր նրան:

— Հ՞ը, ճիշդ չէ:

— Ի հարկէ, կեղծ է, Փոււ:

— Դեռ զիմնազիսակա է, փու, փու... դրան մի լաւ պէտք է խրատել:

— Զարժէ... Միթէ արժէ ուշադրութիւն դարձնել:

— Նայիր, տես ինչ ինքնահաւան ման է գալիս. յիմար. չէ, պէտք է դրան մի լաւ խրատել:

— Իսկապէս որ արժէ:

Նրանք թեանցուկ սկսեցին յետ ու առաջ գնալ, փսխալով միմեանց ականջին և բարձր ծիծաղելով:

— Ինչու չեն սկսում, — դարձաւ, աղջիկը հօրը:

— Աա, սարսափելի ուշացնում են:

— Կեղծ է, օրիորդ, — յանկարծ լսվեց մի բարակ ձայն:

Աղջիկը վախեցած յետ նայեց, նրանք էին:

— Կեղծ է, օրիորդ, կեղծ է, աւելի բարձր կրկնեցին նրան և հոհուալով անցան.

Աղջիկը շփոթված նայեց շուրջը, առաջ չը հասկացաւ, թէ ինչն է կեղծ, ինչ բանի են ակնարկում. յանկարծ նա յիշեց պալարը, մուշկանց նա իր այտի փոքրիկ բշտիկի պուզիկի վրա դրել էր մուշկա, իսկ աղջիկները ընդունել էին նրան կեղծ խախ տեղ իրը թէ կամաւ կացրած առանձին տպաւորութիւն գործելու նպատակով. Օրիորդը բարկութիւնից հազիւ էր կարողանում զըսպել իր արցունքները: Նա ուզեց վազել նրանց ետելից, ապտակել այդ յանդուգն աղջիկներին նրան թւաց թէ բոլորը իրան են նայում, թւաց, թէ պալարը մեծանում է, հետն էլ մուշկան արդէն ծածկել է ամբողջ այտը. նա անգիտացաբար ձեռքը տարաւ, շօշափեց. մուշկան տեղն էր, ուզեց պոկել, բայց իսկոյն ուշքի եկաւ, ցածթողեց ձեռքը, աւելի շփոթվեց, կարմրեց. նրան թւաց, թէ բոլորը նկատեցին նրա այդ շարժումը: Այդ բօպէին նրանց մօտենում էին նրանք:

Աղջիկը գունատվեց, ներքին ծնօտը դողաց. նրանցից մէկը արմունկով խփեց աղջկան և յանդուգն կերպով նայելով աղջկայ դէմքին, կրկնեց. Կեղծ է, օրիորդ, կեղծ է:

Աղջիկն աւելի մօտ սեղմվեց հօրը և դողալով, լալկան ձայնով շշնջաց.

— Հայրիկ, տուն գնանք:

—Ինչու, ի՞նչ կայ:

—Լաւ չեմ զգում ինձ, մրսում եմ:

—Լաւ, գնանք:

Նրանք դուրս եկան ֆօյէից: Ծառան վե.

բարկուն հազցնելուց յետոյ պիհնդ-պիհնդ նայեց:

աղջկայ այտի վրայի մուշկային. աղջկան թւաց,

թէ նա էլ ժպտաց և մտքումը կրկնում է «կեղծ

էր, կեղծ»: Մտնելով հօր թևը, նրանք դիմեցին

դէպի ելքը:

Յանկարծ հոհուալով մի կանացի ձայն կան-
չեն նրա ետևեց.

—Կեղծ է, կեղծ...

Աղջիկը յետ չը նայեց: Դուրս եկան թատ-
րոնից. կառքի մէջ նա մի ազատ շունչ քաշեց:

—Յիմարնէր, —կամաց ասաց նա և լոեց:

—Հը, հօ էլ չիս մրսում:

—Ոչ:

—Ինչու այդքան շուտ վերջացաւ, —հարց-
րեց մայրը աղջկան:

Աղջիկը ոչինչ չը պատախանեց, անցաւ իր

սենեակը, արագ հանեց գիմի մետաքսեայ շալը,

մօտեցաւ հայելուն, նայեց այտի վրա սեին տուող

մուշկային, զայրոյթով պոկեց, այնպէս որ պա-

լարից մի փաքրիկ կաթիկ արիւն երևաց:

Սուացն հանվելու ընկաւնա մահճակալի վրա

և սկսեց լալ:

առ այս մեջ պահանջ է առաջ բար ընդու ի՞նչ
ինքու բար ու ա մեջ ով մահանան պիհուա
ձառ ով պահանջ պահանջ ու ա պահանջ ու ա պահանջ:

ՎԱՐՉՈՒԻ ՄԷԶ

առ այս մեջ պահանջ է առաջ բար ընդու ի՞նչ
երրորդ օրն էր: Վագօնի, մէջ էի ձանձրա-
ցել էի մինչեւ հոգուս խորքը, բայց դեռ չ օրէ էլու
պէտք է գնայի:

Սըեր դեռ նոր էր ծագել, երբ ես զարթկե-
ցի քնից, իջա վերկից, երեկոյեան, հարեւաննե-
րից միայն մէկն էր մնացել. միւսները նոր էին:
Չոր տափտակների վրա երկու գիշեր անցկացնե-
լուց կողքերս ջարդկել էին. Վագօնում մի այն-
պիսի գարցահոտութիւն էր տիրում, որ ես իջ-
նելուց անմիջապէս փորձեցի բանալ պատուհա-
նը, բայց հարեւաններս բողոքեցին, թէն նրանց
բողոքն ի գուր էր, որովհետև պատուհանները
ամրացված էին և իմ ջանքերս ապարդիւն ան-
ցան: Ես դուրս եկայ քիչ թարմ օդ շնչելու,
բայց այստեղ էլ ցուրտ էր. ստիպված էի նորից
մտնել վագօնը և տեղաւորվել հին տեղումնէ:

—Հեռոն էք գնում, —հարցը դիմացս նըց-
տած մարդուն:

—Մեազան:

—Մուք, —կիմեցի տիկնոջը, որը թէկ երե-
խայ ուներ գրկում, բայց բոլորովին օրիորդի էր
նման:

—Հեռու:

Մի ուրիշ տեղ պէտք է վնասուել, թէ չէ՝ բոլորովին անտանելի կը լինի, երբ այդ բոլորի վրա աւելանայ և... երեխայի ճշոցը՝ ես ոտի ելայ:

Ամեն կայարանում ներս էին թափվում նոր մարդիկ. ես միանգամայն յոյս կտրեցի, որ կարող կը լինեմ մի ուրիշ յարմար տեղ գըտնել, և կամաց-կամաց հաշտվեցի, որ հին տեղում կը մնամ և այս մի օրն էլ մի կերպ կանցկացնեմ: Արդէն մօտենում էինք կայարանին. ես նստեցի առաջվայ տեղս, որ դա էլ ձեռքիցս դուրս չը գայ: Ու կարգով ճանապարհորդելիս ամեն կայարանում վտանգվում է տեղը, որ Յ օր է ճանապարհին ես. ոչ խնդիրք, ոչ սպառնալիք չեն օգնում:

Ես նստած մնացի և դիմում էի հարեանունուա. ինչ լաւն է, ինչ խելացի դէմք ունի. աչքերի մէջ մի մռայլ բան կար, որը իմ մէջ աւելի հետաքրքրութիւն առաջացրեց: Նա կերակրեց վերջացրեց զաւակին, մի քանի անգամ ամուր համբուրեց, այնպիսի կարօտով, կասես կորած էր և նոր էր գտել, կարծես երկար ժամանակ բաժանվել էին և նա այժմ նոր էր տեսնում: Նա ինամքով փաթաթեց երեխային այնպէս, որ միայն դէմքն էր բաց, որտեղից երկում էր նրա կլոր դեռ անորոշ գոյնի աչքերը: —Ինչ լաւ երեխայ է, —ասացի ես մատով:

Խմիելով երեխայի շրթունքներին, որի դէմքի վրա երևաց ժայտի նման մի բան և էլի անհետացաւ: Այսուհետու այս այլ մայրը՝ մի մերամաղձոտ ժայտ շրթունքներին, նայեց երեխային և մի քանի անգամ համբուրեց: —Քանի՞ ամսական է:

—Չորս:

Շատ լաւն է: Հօր մօտ էք տանում:

—Ոչ:

—Հօր մօտից:

—Այն, —կարծես խուսափելով պատասխանից՝ ասաց նա և լրեց:

Գնացքը դանդաղ մօտենում էր կայարանին: Հարեւանուհիս աւելի և աւելի անհանգիստ էր դառնում: Նրա շրթունքների վրա ինչ-որ մի վշտոտ բան կար, աչքերի մէջ արցունքներ, ներքեւի շրթունքը ջղայնօրէն դողում էր. Նա կարծես հազիւ էր պահում արցունքը:

Գնացքը կանգ առաւ: Նա ցած դրեց գրկեց երեխային իր կապոցի մօտ:

—Երկար է կանգնում:

—Կարծեմ հինգ րօպէ:

—Ուրեմն կը հասնեմ: Եղեք բարի, —դիմեց նա մեզ: —Նայեցէք երեխային, ես իջնեմ. սատիկ ծարաւ եմ. հաց էլ պիտի առնեմ: —Տուէք ինձ, ես կը պահեմ, —ասացի ես՝ առնելով երեխային գիրկս: —մի անհանգմտանաք:

Նա մի քանի անդամ համբուրեց, գնացամին-
չել դուռը, յետ եկաւ նայեց: Ասաց եւ ապա առաջ
—Ես իսկոյն կը գամ, ասաց և արագ դուրս
գնաց:

Երեխան չոած աչքերով նայում է ինձ, Յս
թէն չէի սիրում շատ փոքրիկ երեխաներ, բայց
այս մէկը, սրա մէջ լաւ բան կար, այնպէս սպի-
տակ հարթ մորթ ունէր. Փոքր երեխաները միշտ
կարմիր են լինում, որից ես զգում եմ. սա
նման չէր նրանց:

—1... 2...

Երկրորդ զանգը. Երեխան գրկիս՝ ես մօտեցայ պատուհանին.
արդէն սկսել էի անհանգստանալ, որ խեղճ կենը
կարող է ուշանալ:

—1... 2... 3...

Երրորդ զանգն էլ խփեց. մի վայրկեան էլ
լսվեց սուլոցը, և գնացքը շարժվեց առաջ դահ-
դաղ ու հետզհետէ արագ:

—Ի՞նչ եղաւ...

Երեխան գրկիս՝ ես մնացել էի կանգնած:
—Ի՞նչ եղաւ:

Բոլորը վեր կացան, այս ու այն կողմ նա-
յեցին. մէկը դուրս գնաց դուրսը նայելու: Ան-
ցաւ էլի հինգ րօպէ, երեխայի մայրը չը կար-
ես շատ յիմար դրութեան մէջ էի. Երեխան գըր-
կիս՝ մայրը չը կար:

—Զը կայ, —հարցըի հարկանիցս, որը գնա-
ցել էր դուրսը նայելու:

—Զէ:

—Կօնդուկտորին պիտի ասել, գուցէ վագօնը
շփոթել է:

Կօնդուկտորին ասացինք. Նա էլ վնտուց
ամբողջ գնացքում օբերի հետ. Հը կար ու Նը
կար:

—Մի գժբաղդութիւն պատահած չը մինի
խեղճին:

—Ի՞նչ գժբաղդութիւն. չէ որ եթէ մի քան
լինէր՝ կիմանայինք:

—Ի հարկէ. ապա ի՞նչ եղաւ:

—Երկի հէնց այդպէս էլ արել է, թողել է
ու գնացել:

—Ի՞նչպէս թէ...

—Շատ պարզ է. ձգել է ու գնացել: Ան-
ցեալ տարի էլ մի այդպիսի դէպք պատահեց. ապա
նայեմ:

Նա առաւ իմ գրկից երեխային, ցած դրեց
և սկսեց խուզարկել երեխայի շորերը:

—Ահա, գտայ:

—Ի՞նչ բան:

Նամակ:

Վագօնում եղողները հաւաքվել էին մեզ
մօտ, բոլորն էլ զարմացած ու չարացած:

—Ի՞նչ լրբութիւն է, —կանչեց մէկը:

—Ծնում են ու թափթփում շան լակոսների նման:

—Ի՞նչ անեն. ինչով պահեն. հեշտ է մեղադրելը—ասաց մէկը, ձեռքով արեց ու գնաց:

—Ապա տեսէք ի՞նչ է գըված:

Ես վերցրի նամակը.

«Բարի մարդիկ, չը թողնէք սրան:

«Ծնվել է 1902 ա. փետրվարի 14-ին, անունը Սերգէյ: Մնաս բարով, թշուառ ձագուկ. երը մեծանաս՝ չանիծես մօրդ. ես ուրիշ կերպ չէի կարող վարվել: Նզովիր հօրդ... ես շատ եմ լաց եղել, եւ շատ բան պատրաստ էի զոհել... բայց ուրիշ կերպ վարվել չեմ կարող... չեմ կարող... ներիր... ներիր... ես չը գիտեմ ինչ եմ անելու առանց քեզ...»

ԶՐԻ ԹՎԵՑՄԱՆ

Որտեղ էր քնել, չգիտեմ:

Ես նրան պատահեցի արագ դէպ հրապարակ գնալուց, ուր ընկերութեան թէյարանն էր, որտեղ ամեն օր հաւաքւում էին անփող մարդիկ ու ձրի թէյ ու մի կտոր հաց էին ստանում:

Արդէն երեք ամիս էր, որ խօլերայի պատճառով այդ և դրա նման թէյարաններ գոյութիւն ունէին.

Գնում էր ժպիտը դէմքին և գոհ, որ այդ տարափոխիկ հիւանդութիւնը կայ և, այդ հիւանդութեան շնորիւ, ինքը ամեն օր կարողանում է տաք թէյ խմել:

Թամին խաղում էրնրա պատառոտած զգեստների հետ, տեղտեղ մերկացնում նրա կեղտոտ մարմինը, թէև ոտներին մի ինչ որ կոշկի նման բան կար, բայց համարեա բորիկ էր. մազերը երկայն, կեղտոտ և զգգուած:

Նա այնպէս լաւ է զգում իրեն թէյատանը:

Նա նստում է թէյի սեղանի առաջ, և նրան ծառայում են: Նա երբեմն մինչև անգամ հրամայում էր, բարկանում, երբ ուշացնում էին,

կամ թէյը շատ բաց էր լինում, ինչ անենք, որ
ձրի է...

Նա արագացրեց քայլերը, որ որքան կարե-
լի է շուտ տեղ համնի ու նստի իւր սիրած տե-
ղում:

Նա արդէն պատկերացնում էր իրեն նստած
սեղանի մօտ, տաք թէյը հացի հետ առաջին. մի
ակամայ ժպիտ երևաց նրա դէմքի վրայ:

Արդէն երևում էր թէյարանը, բայց նա
չնկատեց սովորական աշխոյժը, որ միշտ լինում
էր թէյարանի շուրջը սովորաբար այդ ժամին:
Դեռ հեռւից նապարզ տեսնում էր փայտեայ
թէյարանը, բայց ինչ էր կատարւում թէյարա-
նի ներսում, նա պարզ չէր որոշում:

Քանի մօտենում էր նա, աւելի լաւ էր տես-
նում, որ մի ինչ որ բան է պատահել, որը ինքը
չգիտէ: Ամենից առաջ նանկատեց, որ ջրի տա-
կառը չկար, որը այդ ժամերին անպայման լի-
նում էր թէյարանի առաջ...

Նա սկսեց համարեա վագել...

—Գուցէ մի բան է պատահել... թէ ինչ
կարող էր պատահել, նա այդ չէր դիտակցում:

Բայց եթէ թէյարանին մի վտանգ է սպառ-
նում, նա պատրաստ է իւր կեանքը վտանգի են-
թարկելով պաշտպանել:

Նա կանգ առաւ թէյարանի առջև և ոչինչ
չհասկացաւ, ինքնաեռը չկայ, չկան հաց, թէյ

բաժանող մարդիկը, ոչինչ չկայ, մի միայն տախ-
տակի պատերն ու նստարաններն են մնացել:

Մի քանի մարդ նստած հողէ յատակի վրայ,
լուռ աննպատակ իրար էին նայում: Նա ճանա-
չում էր դրանց, թէկ երբէք չէր խօսացել հետ-
ները, բայց համարեա ամեն օր տեսնում էր:
Մի քանիսն էլ թէյարանի պատերի տակ շինուած
տախտակէ նստարանների վրայ երեսի վրայ
փուլած քնել էին:

Նրան թւաց, թէ երագում է և աչքերին է
երևում, նա չհասկացաւ, ինչ է նշանակում այդ
փոփոխութիւնը, մոլորւած այս ու այն կողմը
նայեց ու մնաց անշարժ:

Նա երբէք այդպիսի ծարաւ չէր զգացել,
երբէք այդպիսի կարիք չէր զգացել տաք թէյի,
այնքան տաք, որ թոքերը այրէին, նա պատրաստ
էր միմեանց ետեից 10 բաժակ դատարկել, մին-
չև յագեցնի ծարաւը:

Նա լուռ կանգնած էր, յանկարծ աչքին ըն-
կաւ մի քանի տեղ թէյարանի պատերին թղթէ
կտորներ. նա թէկ կարդալ համարեա չգիտէր,
բայց արագ մօտեցաւ և սկսեց տառերը կապե-
լով կարդալ:

—Ուզում ես առնել:
Քմծիծաղով դարձաւ նստողներից մէկը
նրան:

Նա ոչինչ չպատասխանեց, նայում էր տա-

ուերին և ոչինչ չէր հասկանում, նա աչքերին
չէր ուզում հաւատալ, ոչ էլ լսածին:

—Ծախսում են... ինչպէս... ուրեմն պէտք է
քանդեն... ինչու... իսկ որտեղ նա պէտք է
այսուհետև թէյ խմի:

—Շատ մի նայիր. աչքերդ կփշանան:

—Անցաւ մեր երկրային երջանկութիւնը:

—Շուն շան որդիք, մեծ բան էր, մի բա-
ժակ թէյ. էին տալիս, կսատկէին: Հայհոյեց
մէկը, թէկ չգիտէր ում է ուղղւած իր հայհո-
յանքը:

—Բայց ինչու են հաւաքել... գոնէ ասէին
որ հաւաքելու են:

—Ինչու... հաւաքել են, էլ չեն ուզում ձրի
հաց է տան, թէյ տան, ասում, են աշխատեցէք ու
կերէք:

—Բայց ինչու:

—Սարսաղ... ինչու... ի՞նչ, կարծում էիր, քեզ
համար են մտածում թէ ինչ է, թէ կարծում ես,
հօրդ խէրին էին ձրի հաց ու թէյ տալիս:
Վախենում էին, որ մենք հիւանդանանք ու ի-
րանց էլ վարակենք, դրա համար էլ իբր թէ մեզ
համար սրտացաւութիւն էին անում... յիմա խօ-
ւերը վերջացաւ, էլ վախենալու բան չունեն, հա-
ւաքել են ու տախտակներն էլ ծախում են. թէ
ուզում ես, առ:

Նա կամաց կամաց հասկանում էր խօսելը,

վերջացել է, էլ չեն վախենում... էլ թէյ չեն
տալու, ու տախտակներն էլ ծախում են...

—Մենք ենք մեղաւոր, որ դրանց տւած ո-
ղորմութիւնը ընդունում ենք, իրանք էլ հօ չեն
աղատուիլ:

—Տղերք, կանչեց յանկարծ մէկը, տեղից բար-
ձրանալով — եկէք բունտ սարքենք:

—Որ ինչ:

—Ասենք, թող թէյ տան... պահանջենք:

—Ումնից:

—Ումնից:

—Համաց...

Նա ոչինչ չպատասխանեց, քարշ գցեց գլուխը
և կարծես մոռացաւ և իւր առաջարկը և ընկե-
րոջ հարցը...

Նա գիտէր, որ ինքը ծարաւ էր ու քաղցած,
բայց ումնից պահանջել նա, այդ չգիտէք:

Կամաց — կամաց հաւաքւում էին և ուրիշները,
սովորական յաճախորդները, և հայհոյելով կամ
գնում էին, կամ նստում թէյատան պատերի մօտ,
իրանք էլ չգիտէին ինչու:

ԱՇԽԱՆ ԹԱՂԻԿԵ

— զայ բարձուցին ճշտեալ ըմբռաք զոմբը —
I լավագուստ ամառ զիմ լիսրամայ

Նա գիտէր: որ ինքը այլևս երիտասարդ չէր,
որ կորցրել էր թարմութիւնը: Նա արդէն դա-
դարել էր երազել և հաշտւել էր այն մտքի հետ,
որ մի կերպ քարշ կտայ այս մնացած կեանքն էլ:

Նա յիշում էր, որ երբ դեռ 16 տարեկան
էր, աշխայժ էր, ուրախ, լի յոյսերով։ Նա ինքն էլ
չնկատեց, թէ ինչպէս անցան տարիները, բայց
մի օր սոսկաց՝ նկատելով գլխին երկու ձերմա-
կած մազ, որ արծաթէ թելերի նման փայլում
էին սև սաթի պէս սև մազերի մէջ։ Նա պոկեց
այդ յանդուգն մազերը, որ ժամանակից առաջ
էին ձերմկել, և մի խոր հառաջանք դուք թուաւ
նըա կրծքից։

Երբ դեռ նոր էին սկսել հատ-հատ ձերմիել,
նա պոկում էր, բայց յետոյ նա սկսեց ներկել,
երբ արդէն անհնար էր դուրս տալ....

Ինքն էլ չնկատեց, ինչպէս անցան տարիները, և մի օր աչքերը բացեց և տեսաւ, որ տանը մնացած պառաւած աղջկիկ էր, և սիրտը ճմլեց կրծքի տակ:

40 տաըի նա շարունակ սպասել էր, որ ահա
կդայ նա, կսիրէ, կփայփայէ. նա կդառնայ տան-
տիկին, սիրող, շատ սիրող կին։ Երա երևակայու-
թեան մէջ վառ պատկերանում էր նա։ Բայց տա-
րիները գլորւել էին միմեանց յետելից, և նա չէր
եկել։

Այժմ նա բնակւում է իր մի յարկանի տան
մէջ. նա զագարել է երազել. բայց էլլ սրտի
խորքում նա գեռ հաւատում էր նրա գալուն:
Նրա սիրաը մանկան պէս վախկոտ էր. նա գեռ
կարմրում էր աղամարդու ամեն մի հայեցքից,
թեթև շփումից:

Նա կարծես չէր ուզում հաւատալ, որ կեանքը անցնում է, և արհեստական միջոցներով կամենում էր պահպանել իր թարմութիւնը։ Նա խնամքով ներկում էր մազերը, գնում էր այն բոլորը՝ ինչ գտնում էր լրագրական յայտարարութիւնների մէջ, ինչ լսում էր իր ծանօթներից, որոնցով նա ուզում էր դադարեցնել բնական թառամելը։

Բայց ոչինչ չէր օգնում և պարզ տեսնում
էր, ինչպէս օր օրի վրայ դէմքի կաշին կնճռո-
տում է, կորցնում թարմութիւնը: Եւ նա յու-
սահատւած դէն ձգեց բոլոր միջոցները և թո-
ղեց որ կեանքը գործը կատարէ. նա փակւեց իր
մի յարկանի տանը իր պառաւ աղախնու և ծե-
րացած մոխրագոյն կատւի հետ:

Նրա աչքում այնպէս ողորմելի թւաց իր
կեանքը. էլ ինչին է պէտք նրան կեանքը:

Երբ նա դուրս եկաւ նրա մօտից, ճանապարհին երբ գեռ վերքը թարմ էր, նա ոչինչ չէր զգում. երբ տուն հասաւ, նրա ականջին պարզ հնչեցին նրա խօսքերը. «Նա սպանւել է պատերազմում»... Նա ընկաւ մահճակալի վրայ երեսի վրայ. երկար նա տանջւեց, մինչև արցունքները եկան մխիթարելու նրան, և նա դառը լաց եղաւ:

Այդ օրը նա կանչել տւեց քահանային, գրել տւեց կտակը, նաիրեց բոլորը պատերազմում ընկած զինուրների որբ մնացած ընտանիքներին, իսկ տունը իր պառաւ աղախնուն:

Միւս օրը նրան գտան կախւած իր սենեակում:

Թաղումը շատ անշուք էր: Աղախինն էր, որ աղեկառւը լալիս էր. և այն երկու երիտասարդները, նրանք էլ եկել էին հրաժեշտ տալու նրա դիակին:

— ուղիւր մմս Շոմի վնասվծո քանակդք Նմտ ովհ
յուսենոգի ժղոմդ կտորայոր քանակց կտորայ
յուսումվումնից դ զոմդ ովհ յուսենուր մմդումտո
տավիդդ ոմտ յունդուր վզոմժ վյ մքումտու

։վմտիուժ
տունոժ կվեզեգի ։յետկոչուզուի ցոստ վմդժնո
տմդ մհ տղ կտորամտուր յուսօտուր մհ ովուր վհոչ
։ս լվմտս մհուրան տովեզոց ևզտ վյ հս տղ ։մհ
յուսովումտուր ետմտ դ ելդժ մհ լգոյմտե լտմփո
տմդ ողորդ լոկիցետ վտոսգի մհ ովուր շահով
մհավեչ լհ ոժոյկ ովոցուր ։յուսումտուր մհ ետմտ մմ
։մդժուր մմդումդուր ։մդովելումմանոտ մկ եգմենսի
տղ ։նկմդժուր վկտորնսի մմդուրետեն Նմտ մկ
լոկիցոք մհ յուստուր տղ մյուգվեսնանեն քոյ
։լցուն նով ոզրուր մհ տումտուր տղ ։մմդոյցոտի
։տղ ունուր եգումտումմա եվրունոտ ովհուստ ենցի
տղ ։ովհնմս ցամժումոյ մկ մհ լգմզ տօր տմդ ովհնս
։ոգց վրունու նմտուտովմդ վյ յունտովուոտ տղ մմդ
։նկմօ ոմտ եգումտուր կուվելուսափափի Նմդ

։մժրհն յուսմտուր ։մմդետուր մկ
յուսկմզոյ իսժրուոյլ ։յիսետմտուր ովհմզի մկ յուրացի
։ոց ։Շոմի վզմդտումտ մկ լգոյմտե ժնու եզոկո
եվմսոյ տղ ։ուոմդ լոտեր եզեւս յունդուր ովհ
։մզի վյ ոգքմտի մնետմ ։յոկի մմդ տղ լոեկ մմ
։լոտուր մկ լգմտետե ոչետոդկուոցի տղ

։ունուր յու նունուր լուսի ունուր յունուր յունուր

նամակը, նայեց ծրարին. աչքերը սևացան, նա էլի ընկաւ բարձերի վրայ:

Մի քանի վայրկեան նա մնաց այդ դըռւթեան մէջ:

→ Ձուր, շշնջաց նա:

Աղախինը մի ձեռքով բաժակը մօտեցրեց նրա շրթունքներին, միւսով պահեց գլուխը. նա մի քանի ումապ խմեց, սրբեց շրթունքները, մի խոր շունչ քաշեց ու պանկեց տեղը:

Նեարդային կերպով պատուեց ծրարը: Նամակը նրանից էր: Նա ներդւմ էր ինդրում, որ այնքան անսպասելի էր եղել գնալը, որ չէր կարողացել գալ ամսաք բարով» անելու և խնդրում էր, որ 300 ըուրի տարաբնակերոջըն որ ուղարկի իրեն. վերջում ինդրում էր աղօթել, որ Աստուած պահպանէ իրան պատերազմի դաշտում:

Նա վերջացրեց նամակը: արցունքների խեղդում էին նրան. իսթերիք կերպով սկսեց պալ. նա լալիս էր, համբուրդում նամակը, սեղմում կրծքին:

Շփոթւած աղախինը չգիտէր ինչ աներ ինչպէս հանգստացնէր...

— Օքինրդ... օքիորդ... ան ո՞ւ անոյի ո՞ւ
— Մաշն, Մաշն, ճշաց նա, ընկաւ աղախ-
ուու գիրկը և արցունքների միջից սկսեց ջերմ-
ջերմ համբուրել նրան:

Մի քիչ հանգստացած նա ծունկ չոգեց և ջերմեռանդութեամբ սկսեց աղօթել:

VII.

Նա ամենայն ուշադրութեամբ հետևում էր լրագիրներին, դրանով էր ապրում. յաճախ նա գնում էր նրա ընկերոջ մօտ՝ նրանից տեղեկութիւններ իմանալու:

Բայց մի օր նա երբ ձանձրացել էր այդ անհաճելի այցելութիւններից, ուղղակի յայտնեց որ նա պահնել է պատերազմում:

Այդ լուրը նա լսեց շատ սարրալաց չեղաւու գունստ, լուռ ոտի կանգնեց, առանց ոչինչ անելու գուրս եկաւ սենեակից:

Ամեն ինչ ջարդուփշուր եղաւ, երազները թառամեցին. այժմ նա նման էր ծովափում ընկած կոտրած նաւի:

Նա խորը կերպով զգում էր, որ իր կեանքը վերջացաւ. բաղդը մի անգամ էլ ուղեց ծաղրել նրան, մի անգամ էլ նրան ապրելու յոյս նուեց. բայց շուտով էլ խլեց, կարծես աւելի խորը զգաց նել տալու խոր վիշտը, իր մենակութիւնը:

Բայց նա օրհնում է նրա պատահելու ժամը. նա երջանիկ եղել է, ինչ անենք, որ դա միայն մի քանի օր էր. այդ էլ բաւական է. նա տեսել է երջանկութիւն:

մի վայրկեան քարացած մնաց հայելու առաջ
գլխարկը ձեռքին, ապա նետեց գլխարկը մի
կողմ և արագ դիմեց դէպի դուռը, որ սղմի
նրան իր կարօտած կրծքին, էլ երբէք, երբէք
բաց չի թողնիլ... Նա թող սպանի նրան, միայն
չթողնի նրան մենակ՝ որ առանց նրան ապրել
չէր կարող:

Նա չպասեց աղախնուն, ինքը վագեց բա-
նալու դուռը և շէմքի վրայ հանդիպեց նրա ըն-
կերոջը. Նա վախեցած մի քայլ յետ-յետ դնաց:
—Որտեղ է նա:

Տղան ոչինչ չպատասխանեց, անցաւ սե-
նեակ, մի կողմ նետեց ձեռքին բռնած գլխարկը,
վերարկուն ու նստեց բազկաթոռի վրայ:

—Օհ, ինչ յոգնել եմ:
—Ի՞ոչ է պատահել նրան... ուր է նա:
—Ո՞վ, կարծես չհասկանալով՝ անտարբեր
հարցը նա:

—Նա, Սերգէյը:
—Նա գնաց... տարան:
—Գնաց... տարան...
—Տարան պատերազմ:

Նա մի քանի վայրկեան լուռ նայեց աղա-
յին, որ այդպէս անտարբեր կերպով ասում էր
այդ. մի քանի քայլ յետ-յետ դնաց և ուշաթափ
ընկաւ գետին:

Մի շաբաթ էր անցել. նա հիւանդ պառկած
էր անկողնում. ոտների մօտ նստած էր նրա
պառաւ աղախինը:

Անկարելի էր նրան ճանաչել. գունատ, նի-
հարած աչքերը խորն ընկած. այդ մի շաբաթում
նա 10 տարով աւելի ծերացած էր երեսում:

Երկուսն էլ լուռ էին. Պառաւ աղախինը
շատ էր աշխատել մխիթարւել, բայց յուսահատ-
ւել էր ու լոել:

Ոչ մի շշուկ. չորս կողմը լուռ էր. լուռում
էր օրիորդի թոյլ շնչառութիւնը այնպէս, որ
զանգի ձայնը այդ լուռ թեան մէջ թնդանօթի
հարւածի չափ ուժեղ թնդաց:

Աղախինը գանդաղ բարձրացաւ և գնաց
դուռը բանալու:
Հիւանդն էլ լսեց այդ ձայնը. Նա բարձրա-
ցրեց գլուխը և սպասում էր թէ ով է յիշել ի-
րեն. նրա դէմքի վրայ խաղաց մի թեթև յոյս
և էլ մարեց:

Մտաւ աղախինը մի նամակ ձեռքին. աղջ-
կայ սիրտը սկսեց ամուր բարախել՝ այնքան ա-
րագ, որ նա ոչ մի խօսք չկարողացաւ արտա-
սանել... Նա համարեա իլեց աղախնու ձեռքից

տեանելով այդ պառաւած աղջկայ կիրքը՝ բայց
այժմ ինքը գգում է մի անդիմաղբելի կիրք, որ
մղում էր գէպի նոյն այդ պառաւած աղջիքը,
որը գուցէ առաջին անգամն է, որ այդպէս այր-
ւում, գողում է սիրոյ կրակից, ու գուցէ եր-
բէք չի զգացել սիրոյ քաղցրութիւնը... Գուցէ
հէնց այդ հետաքրքրութիւնն էր, որ այդպէս մի
անգամից վառեց նրա ցանկութիւնը, և միտե-
սակ ինքնամոռացութեան մէջ ու ընկաւ նրա
գիրկը:

V.

Այն երեք օրը, որ նա ապրեց նրա հետ,
նրան մոռացնել տւին իր կեանքի բոլոր դառ-
նութիւնները:
Վերջապէս նա տեսաւ իր երազը՝ իրական
նացած:
Նա սիրում էր և սիրւած էր և այն էլ մի
գեղեցիկ երիտասարդ տղայ, որին երբէք չէր
երազել:

Նա անհամբեր սպասում էր նրան, նա նըս-
տած էր պատուհանի առաջ: Ինքնաեռը վաղուց
պատրաստ էր: Սեղանի վրայ դրւած էին ամեն
տեսակի քաղցրեղէններ:

Նա լուռ նստած էր: ամեն մի կառքի ձայն

լսելուց նա ցնցւում էր, անհամբեր սպասում
էր կանգ կառնիթէ ոչ:

Նշանակւած ժամից վաղուց անցել էր, բայց
նա չկար. անհամբերութիւնից նա ոտի ելաւ ու
սեպագային սկսեց պտտել սենեակի մի անկիւ-
նից միւսը նա պատրաստ էր երեխայի նման
լալու:

Նա կանչեց աղախնուն, պատւիրեց նորո-
գել հանգած ինքնաեռը, ինքը ընկաւ գահաւո-
րակի վրայ և երկու ձեռքնի ծածկեց դէմքը:

Աղախինը զարմացած նայեց իր տիրուհուն,
ուզեց բան ասել, բայց չասաց. լուռ՝ վերցրեց
ինքնաեռը և գուրս գնաց:

Այդ օրը նա իզուր սպասեց, փոռը սպա-
սեց երկրորդ, երրորդ օրը: նա չկար:

Ցուսահատութիւնից նա պատրաստ էր գլխի
մազերը վետտել չանգուտել դէմքը, մատերը
կրծոտել:

Ո՞ւր գնար, ումնից հարցնէր, որտեղ տես-
նէր նրան:

Նա անկարող է ապրել առանց նրան:

Նա ոտի կանգնեց, վագեց իր սենեակը,
սկսեց արագ հագնւել. նա կգտնի նրան, որտեղ
որ լինի գուցէ հիւանդ է. գուցէ նա էլ տանջ-
մում է իրեն տեսնելու տենչով:

Արդէն պատրաստ էր դուրս գալու՝ երբ
լսեց զանգի ուժեղ ցնցում ու կանգ առաւ, ան

— Ո՞ւր է Վասօն, նա ինչու չեկաւ։
 — Ամբողջ օրը չեմ տեսել, չգիտեմ ուր է
 կորել... ինձ շատ հարկաւոր էր նրան տեսնել,
 շատ... ինձ հարկաւոր էր...
 — Ի՞նչ է պատահել ձեզ, դուք այնպէս
 յուզւած էք երեսւմ...
 — Ա՛խ, ոչինչ... ոչինչ։ Ուղղակի անիծեալ
 կեանք է, մի ինչ որ 200 բուլի, ոչ մի տեղից
 չկարողացայ գտնել, որ շպրտեմ այդ անպիտա-
 նի երեսին. այժմ ուզում է մուրհակը դատա-
 րան տանել։
 — Ի՞նչու ինձ չէք ասել... էլ ո՞ր օրւայ հա-
 մար է բարեկամութիւնը... ամօթ ձեզ...
 — Ա՛խ, ի՞նչ էք ասում, դուք առանց այն
 էլ շատ էք օգնել մեզ։
 — Դատարկ բան է... ես իսկոյն...
 Նա արագ անցաւ միւս սենեակը և երկու
 բոլէ չանցած երկու թղթադրամ ձեռքին ներս
 մտաւ։
 Երիտասարդ պարոնը արագ մօտեցաւ նրան,
 բոնեց նրա ձեռքը և սկսեց համբուրել։
 — Դուք փրկեցիք իմ պատիւր։
 Թղթադրամները ընկան աղջկայ ձեռքից
 նա դողում էր ամբողջ մարմնով։
 — Ձեզ ի՞նչ պատահեց։
 — Ոչինչ, ոչինչ, կանցնի... ուշի գալով՝

կուրծքը արագ բարձր ու ցածր էր անում... Նա
 բացեց աչքերը, նայեց նրան և յանկարծ բոլո-
 րովին անսպասելի կերպով նա ծունկ չոգեց,
 բռնեց նրա ձեռները և կըքոտ սկսեց համբու-
 րել։
 — Ի՞նչ էք անում... ի՞նչ էք անում։
 Նա լուռ, գունատ ոտի կանգնեց և լայն
 բացած աչքերով նայեց նրան, կարծես չհասկա-
 նալով իր արածը. յանկարծ նա երկու ձեռնե-
 րով ծածկեց դէմքը, կարծես ամաչելով իր սի-
 րուց։
 — Ներեցէք... Ներեցէք..., չազիւ լսելի 22ն-
 ջաց նա մեռելի նման գունատ։
 Մի բողէ տիրեց լռութիւն։
 Երիտասարդի աչքերը փայլեցին. նա հաս-
 կացաւ, ուզեց գրկել նրան, միանգամից համ-
 բուրել նոյն իսկ շրթունքները, բայց նայեց նրա
 թառամած դէմքին և յետ քաշւեց։
 Մի վայրկեան երկուսն էլ լուռ էին. տղան
 վերցրեց նրա ոչ այնքան թարմ։ Բայց դեռ գե-
 ղեցիկ ձեռքը համբուրեց։ Օրիորդը դողաց, այդ
 դողը կարծես էլեքտրական թելով անցաւ տղայի
 ամբողջ մարմնով, աչքերը փայլեցին, ամբողջ
 մարմնում զգաց մի տեսակ ջերմութիւն. նա
 այս չէր կարողանում իրեն հաշիւ տալ. նա
 նայեց նրան. այս անգամ նա նրան աւելի գե-
 ղեցիկ թւաց։ Մի քանի բողէ առաջ նա զգւեց՝

ուաջարկելու նրան իր կինը լինել... Ամբողջ գիշերը նա անքուն անցկացրեց, երազեց իր ապագայ կեանքը, երբ արդէն ամուսնացած կլինի...

Բայց միւս օրը փեսացուն փոխանակ ինքը գալու տեսնելու իր նշանաձին, մի մարդու հետ ուղարկեց իր հրաժարականը, պատճառաբանելով աղջկայ տգեղութիւնը, և պահանջում էր 10,000 բուրլի. պակաս չի համաձայնւիլ:

Նրա օժիտը միմիայն 5,000 էր, և գործը գլուխ չեկաւ:

Շատ վշտեր կրեց նա, թաղեց ծնողներին, և ինքը մնաց մեն-մենակ:

IV.

Մի ամբողջ ամիս էր անցել նրանց ծանօթանալու օրից. նրա սէրը օր-օրի վրայ ուժեղացել էր և այժմ նա անկարող է առանց նրան ապրել: Նրա ուրախութիւնը փոխւել էր տանշանքների: Երբորդ օրն էր նա նրան չէր տեսել. արդէն երեկոյեան ժամի 9-ն էր, բայց նրանք չկային. Եթէ այսօր էլ չգան, նա ուղղակի կաելագարւի:

Նա շքեղ հագնւած, մազերը գեղեցիկ սանրած նստած էր հիւրասենեակում ընկլմւած դաժան մտքերի մէջ... Գուցէ նա այլևս չգայ, գու-

ցէ նա էլ չի տեսնելու նրան: Արցունքները խեղդում էին նրան:

Յանկարծ նա ամբողջ մարմարվ ցնցւեց և գունատւած ոտի կանգնեց. նրա ականջին հասաւ զանգի ձայնը, բայց նա կարծես չէր հաւատում իր լսողութեան... մի ըուպէ նա լուսքարացած էր տեղումը, սիրաը ամուր բաքախում էր. նա երկրորդ անգամ լսեց զանգի ձայնը, այլևս անկասկած էր. նա արագ դիմեց դէպի գուռը... Նա գիտէր, որ նրանք են. ուրիշ ովկարող է լինել... Եթէ չլինէր այն միւսը՝ Եթէ նա մենակ լինի, նա պատրաստ էր ընկնել նրա վզովը, սեղմել իր կրծքին, համբուրել, համբուրել անվերջ...

Մի քանի վայրկեան նա կանգնած էր դռան մօտ մի տեսակ ինքնամոռացութեան մէջ. ոտի ձայն լսելով նա ուշքի եկաւ, արագ վագեց դէպի հայելին, ուղղեց մազերը, հագուստը և գնաց դիմաւորելու նրանց:

Դուռը բացւեց, նա էր մենակ, միւսը չկար...

—Օր. Կատերինէ, բարե ձեզ, երեկի չէ՞ք սպասում:

—Ոչ, ոչ... Ընդհակառակը... Ես... Նա չկարողացաւ շարունակել և շփոթւած հրաւիրեց նստել...

Մի ըուպէ երկուսն էլ լուս էին:

տաւմ էր 16 տարեկան աղջկայ նմանել, իսկ
նրա հետ շատ սիրալիք էին:

Նա մի բողէ կանգ չէր առնում, չէր տա-
տանում, երբ նրան դիմում էին փողի համար.
Նրա քսակը բաց էր նրանց համար. նա չէր թող-
նում, որ երկրորդ անգամ կրկնեն: Երբեմն ինքն
էր հարցնում՝ արդեօք փողի կարիք չունի՞ն: Նա
սիրում էր և պատրաստ էր ամեն ինչ զոհել նրա
համար:

Նա աշխատում էր զբաւել նրանց իր ճոխ
հիւրասիրութեամբ, աղաչում էր, որ աւելի յա-
ճախ այցելեն, գանգատում էր իր մենակու-
թիւնից...

Նրանք գնում էին, և անհամբեր սպասում
էր հետեւալ այցին:

Դանձ զանո՞ւ լինա ո՞ւ ավան քրիստուկ կ՞մ
մեռ լավի գոյցոյ ԻԻ. այս ընդունակութեամբ
մասն անուն չ բազմաւա ամ ներ և ո՞ւ լինար
Դա նրա երկրորդ սէրն էր: ու աղջ պրկար
Առաջին անգամ պատահեց՝ երբ նա դեռ 24
տարեկան էր, այս ժամանակ նա դեռ մենակ
չէր, ծնողները կենդանի էին:

Նա նրան սիրեց հէնց առաջին անգամ, երբ
նրան տեսաւ իրանց տանը, երբ նա եկել էր
խնդրելու նրա ձեռքը: Նա սիրեց նրան: Սիրեց
առանց իրեն հաշիւ տալու:

Նա սիրեց նրան, որովհետեւ նա եկել էր ա-



Armenia

Spain

Peru



Zury

Tang

ՀՀ Ազգային գրադարան



NL0350403

42042

